

74

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՅՎԱԶՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ ՍԱՐԳՍԻ

ԹՅՈՒՐՔԱԼԵԶՈՒ ՑԵՂԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԱՂ ՇՐՋԱՆԸ  
(ԹՅՈՒՐՔ ԵՎ ՕՂՈՒԶ ԷԹՆՈՆԻՄՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ)

Է 00.02 «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»  
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

*Կարգելի է պատճենը Առաքելյան Վահագնի*



ԵՐԵՎԱՆ 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Վ.Քոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ. Ավագյան  
պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Ա.Վ. Մաֆայան

Առաջատար կազմակերպություն՝ Հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2014 թ. դեկտեմբերի 22-ին, ժ. 15.00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող՝ գիտական աստիճաններ շնորհող ՀՀ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2014 թ. նոյեմբերի 21-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռ.Պ. Ղազարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՉԱՐՈՒՄԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Թյուրքալեզու ժողովուրդների պատմության վաղ շրջանի ուսումնասիրության հարցը թյուրքագիտության մեջ բավական շատ քննարկված խնդիրներից է: Չնայած դրան՝ այդ ուսումնասիրությունները, որոնք հաճախ գերծ չեն քաղաքական ենթատեքստից, այնուամենայնիվ, առկախ են թողնում այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են, օրինակ, թյուրքալեզու ժողովուրդների պատմության ասպարեզում հայտնվելու ժամանակաշրջանը, վաղ թյուրքալեզու ցեղերի նույնականացումը, ոչ թյուրքալեզու էթնիկ խմբերի հետ նրանց փոխհարաբերությունների պարզաբանումն ու ճշգրտումը:

Հարցի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ այն ունի թյուրքականության գաղափարախոսության հետ մերտորեն առնչվող ընդգծված քաղաքական դրսևորում: Թյուրքականության գաղափարախոսության առաջացումը և կիրառումը Օսմանյան կայսրությունում և նրա իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետությունում կապված են եղել մի շարք գործոնների հետ:

Օսմանյան կայսրությունը դարեր շարունակ առաջնորդվում էր երկրի կառավարման իսլամական սկզբունքներով: Այս կրոնի գաղափարները ներթափանցել էին քաղաքական և մշակութային ոլորտները: Իսլամի հետևորդ կամ օսմանցի լինելու գաղափարը բնակչության կիրթ շրջանում առավել ընդունելի և հարգի տարբերակն էր, քան ցեղային որևէ միության անդամ լինելու ինքնագիտակցության պահպանումը: Այդ պատճառով կայսրության թյուրքալեզու բնակչության ստորին շերտերում էր միայն, որ պահպանվում էին նրանց նախնիների պատմության և ավանդույթների մասին հիշողություններ, որոնք միջնադարում անտեսված, երկրորդական տեղ ունեին:

XVIII-XX դդ. սկզբին աշխարհում տեղի ունեցող արմատական փոփոխությունները, այդ թվում Ռուսական կայսրությունում սկիզբ առած հեղափոխական գաղափարների ալիքը, փոխանցվեցին Օսմանյան կայսրության մտավորականությանը ձևավորելով նոր գաղափարախոսությունների ստեղծման մի հուժկու ալիք: Դրանց մեջ գերիշխողը պանթյուրքիզմի (ինչպես նաև պանթուրանիզմի) գաղափարախոսությունն էր, որը, ինչպես հայտնի է, հմտորեն թրծվել էր Պոլոլոթիեի և Ղրիմի թաթարների շրջանում, իսկ անկախ և հզոր Թուրքիան այդ գաղափարախոսության ջատագովների համար դիտվում էր որպես երազանքների իրագործման հիմնական հենարան<sup>1</sup>:

Եթե երիտթուրքական ժամանակաշրջանի գիտական շրջանակներում խոսվում էր Բալկաններից Ալթայ ձգվող հայրենիքի մասին, ապա Թուրքիայի հանրապետության հիմնադրումով փոքր-ինչ փոխվեց այդ ուղղվածությունը:

Նորաստեղծ Թուրքիան Առաջին համաշխարհային պատերազմում կորցրեց իր տարածքների զգալի մասը, ուստի հանրապետության հոշակումից հետո

<sup>1</sup> Гасанова Э.Ю., Идеология буржуазного национализма в Турции, Баку, 1966, с.55-56, Зареванд, Турция и пантурианизм, Париж, 1930 (Ереван 1991), с. 35-38.

անհրաժեշտություն առաջացավ պահպանելու Թուրքիան թուրքերի համար: Այդ հարցում իր մեծ ավանդն ունի Աթաթուրքը, ով ձեռնամուխ եղավ ազգային մշակույթի ստեղծմանը: Նրա շնորհիվ քայլեր ձեռնարկվեցին արաբապարսկական փոխառություններից թուրքերենի մաքրման համար, ստեղծվեցին գիտական կուրսեր, որոնց առջև խնդիր դրվեց մշակել մաքուր, ազգային պատմություն և լեզու:

Մեր օրերում Կենտրոնական Ասիայի թուրքալեզու ժողովուրդներն ունեն իրենց անկախ ազգային պետությունները: Նրանցից յուրաքանչյուրն ունի իր զարգացման տեսլականը, իր մարտահրավերները և կախված բազմաթիվ գործոններից՝ հնարավոր են նրանց հարաբերությունների փոփոխություններ: Ուստի թուրքականությունն իր սկզբնական գաղափարախոսությամբ արդեն երազանք է:

Այլ է ժողովրդական լայն զանգվածների շրջանում այս գաղափարախոսության շրջանառության հարցը: Մեր օրերում համացանցը ողողված է թուրքականություն քարոզող կայքերով, որոնք խիստ ոգևորիչ են ազգայնամոլական տարրերի համար և ցանկացած պահի կարող են միավորիչ մեծ դեր խաղալ որևէ գործողության իրականացման համար:

Մյուս կողմից, այս գաղափարախոսության միջոցով տարածվում է այլատյացություն այլ ժողովուրդների նկատմամբ, որը նույնպես կարող է կործանարար հետևանքներ ունենալ: Առկա է նաև գիտական կեղծարարության փաստը, որը հաճախ ունի նաև պետական հովանավորություն, ինչը նույնպես մտահոգիչ է այն ժողովուրդների համար, որոնց իրական պատմությունը կեղծվում է:

*Թյուրք* ցեղանվան շահարկումը նոր դրսևորումներ է գտնում Ադրբեջանի հանրապետության քաղաքական կողմնորոշումներում: Նրանցում օգտագործվում է Թուրքիայի թուրքերի և Ադրբեջանի թուրքալեզու բնակչության եղբայրության գաղափարը: Ինչպես նաև արհեստականորեն ստեղծվում է «թուրքական բաժանված ազգի» գաղափարը, որով Իրանական Ադրբեջանը հարակից տարածքների թուրքալեզու բնակչության հետ պետք է միավորվեն մեկ պետության Ադրբեջանի Հանրապետության կազմում:

Մեր օրերում թուրքականությունը երբեմն անիրականանալի երազանք է թվում, բայց կարծես ստեղծվում է մի «արհեստական ոլորտ», որը բազմաթիվ ժողովուրդների փորձում է ներառել իր մեջ: Մինչդեռ թուրքալեզու ցեղերին միավորող լեզվական ընդհանրությունը դեռ բավարար հիմք չէ նույն ծագումն ու նույն էթնիկական պատկանելությունը վերագրելու թուրքալեզու ժողովուրդներից շատերին: Ատենախոսության նպատակն է պարզել, թե որքանով է հիմնավորված նման մոտեցումը և ինչ հիմքերի վրա է խարսխվում այն: Ուստի արդիական է այս գաղափարի հիմքով միավորված ժողովուրդների ծագման, պատմության և մշակույթների ուսումնասիրությունը՝ ի հակակշիռ հակազդիտական վարկածների, որոնք միայն խեղաթյուրում են պատմությունը:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ատենախոսության թեմայի ընտրությունը կապված է թուրքալեզու ժողովուրդների ծագման տեսությունների շարքում երկու մեծ ցեղային միավորումների՝ *օղուզների* և *թյուրքերի* ծագման ժամանակաշրջանի, նրանց հնարավոր փոխառությունների և էթնիկական ինքնագիտակցության բացահայտման անհրաժեշտությամբ, որոնք իրականացնելու համար դրվել են հետևյալ խնդիրներն ու նպատակները:

- Ներկայացնել թուրքալեզու ժողովուրդների ծագումնաբանության առնչվող առկա հիմնական գիտական ուղղությունները և առավել շրջանառվող վարկածները:
- Ներկայացնել այն պատմական շրջափուլերը և այն ցեղանունները, որոնցով ամբողջացվում էին թուրքալեզու ցեղերը և պարզել, թե նրանք որքանով էին իրենց համարում այդ ընդհանուր ցեղանվանումների կրողները:
- Ներկայացնել չինական, հունահռոմեական, հայկական և արաբապարսկական աղբյուրներում հիշատակվող թուրքալեզու ցեղերի մասին տեղեկությունները, ճշգրտել *թյուրք* և *օղուզ* ցեղանունների ի հայտ գալու ժամանակաշրջանները և ներկայացնել դրանց ընկալումը օտար աղբյուրներում:
- Քննարկել այն խնդիրը, թե որքանով էին այդ ցեղանունները օտար աղբյուրներում առնչվում «հասցեատեր» տվյալ ցեղախմբերի էթնիկական ինքնանկարագրին և ինքնարևակալմանը, քանի որ նրանցից շատերի ժառանգներն ունեն իրենց ծագման ու պատմության ինքնուրույն մեկնաբանությունները: Այս խնդիրը վերաբերում է առաջին հերթին մեր ժամանակներում «թուրք», «թյուրք» ցեղանունը կրող Թուրքիայի Հանրապետության թուրքալեզու և իրեն *էթնիկ թուրք* համարող բնակչությանը, որին թուրքական մտավորականությունը վերագրում է Կենտրոնական Ասիայի թուրքալեզու ցեղերի հետ կապված բոլոր հնչել պատմական իրադարձություններն ու ավանդությունները՝ դրանով իսկ պահելով «եղբայրական ժողովուրդների» ամբողջականության գաղափարը:
- Քննարկել Ենիսեյաօրիստյան արձանագրություններում հիշատակված *թյուրք* և *օղուզ* ցեղանունների լեզվաբանական վերլուծությունները և դրանց ծագման հնարավոր ժամանակաշրջանների հարցը:
- Ներկայացնել օղուզական ցեղերին և թյուրքերին առնչվող ավանդագրույցների այն հատվածները, որոնք տեղեկություններ են պարունակում այդ ցեղերի ծագման և պատմության վաղ շրջանի մասին:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության գիտական նախադրյալն այն է, որ փորձ է արվում «թյուրքական աշխարհը» ներկայացնել իր պատմության նախնական փուլում՝ նրանցից շատերին դասակարգելով *օղուզ* և *թյուրք* ցեղանունների շուրջը, որոնք միավորիչ ցեղանուններ են բազմաթիվ թուրքալեզու ժողովուրդների համար:

Խնդիր է դրված՝ պարզել, թե ինչ պատմական պայմաններում է ընթացել այդ ցեղանունների և դրանք կրող ցեղերի ձևավորումը, ինչ փոխառնություններ են ունեցել այդ ժողովուրդների ու ցեղերի հավանական նախնիները, արդյոք նրանք կազմել են էթնիկական ընդհանրություն, թե՞ ոչ:

Սույն ատենախոսությունն իր բովանդակությամբ և հարցադրումներով հայ թյուրքագիտության մեջ առաջին ուսումնասիրությունն է, որում, մեկտեղելով եղած աղբյուրներն ու գիտական ուսումնասիրությունները, փորձ է արվում պարզաբանել վերոհիշյալ ցեղախմբերի էթնիկական ինքնագիտակցության դրսևորումներն իրենց պատմության վաղ շրջանում:

Այս խնդիրների արծարծումը կարող է օժանդակել հստակ պատկերացում կազմելու թյուրքականության գաղափարախոսության և մերօրյա քաղաքականացված թյուրքագիտության հիմքերի հաստատունության վերաբերյալ:

### ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐԸ

Ատենախոսության առաջին գլխում անդրադարձ է կատարվում Կենտրոնական Ասիայի նյութական մշակույթներին, որոնք թվագրվում են մ.թ.ա. III հազարամյակից մինչև մ.թ. V դարն ընկած ժամանակահատվածով: Դրանց ներկայացումը կարևոր է Կենտրոնական Ասիայի մարդաբանական, լեզվաբանական առանձնահատկությունների մասին պատկերացում կազմելու համար:

Նատուկ ուշադրություն է դարձվում նշված ժամանակաշրջաններում թյուրքալեզու ժողովուրդների նախնիների հնարավոր գոյության մասին նախնինում շրջանառված և ներկայումս շրջանառվող վարկածների արծարծմանը: Նաև անդրադարձ է կատարվում ժամանակակից թյուրքալեզու ժողովուրդների և ցեղերի մարդաբանական նկարագրին, ինչպես նաև նրանց միավորող կարևոր բաղադրիչի՝ լեզուների ձևավորման առանձնահատկությունների մասին տեսակետների ընդունված տարբերակներին:

Ատենախոսության II և III գլուխները ներկայացնում են *օղուզ* և *թյուրք* ցեղանունների և դրանց հետ առնչություն ունեցած հիմնական էթնիկական խմբերի՝ պատմության ասպարեզում ի հայտ գալու ժամանակաշրջանը, որն ընդգրկում է մ.թ.ա. III դարից մինչև մ.թ. VIII դ.:

### ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսությունը գրված է պատմահամեմատական մեթոդով: Ատենախոսության հիմքում դրված է թյուրքալեզու ժողովուրդների մասին վկայող բազմաթիվ սկզբնաղբյուրներում եղած նյութերի համադրումը, նրանցում առկա փաստերի և ցեղանունների լեզվաբանական վերլուծությունը: Որոշակի անդրադարձ է կատարվում թյուրքագիտության մեջ շրջանառվող տեսություններին և վարկածներին:

### ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը կարող է օգտակար լինել թյուրքագիտական հետազոտությունների համար: Այն կարող է դառնալ բուհական հատուկ դասընթաց կամ օգտագործվել մեր հանրապետության արտաքին քաղաքականությունը մշակելիս: Սույն ատենախոսության թեման կարելի է դիտարկել որպես օգտակար նյութ Թուրքիայի և Ադրբեջանի Հանրապետություններում ստեղծվող կեղծ պատմագրությանը և ժողովրդագրությանն առնչվող խնդիրները վերլուծելիս:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

XVIII-XIX դդ. Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի վարած քաղաքականության թիրախը դարձան Մերձավոր Արևելքը, Կենտրոնական Ասիան, Հեռավոր Արևելքը: Քաղաքական, տնտեսական և ռազմական որոշակի հաջողությունների հասնելու համար անհրաժեշտ էր համակողմանիորեն ուսումնասիրել այդ տարածքներում բնակվող ժողովուրդներին, նրանց պատմությունը, ավանդույթները, կենսապայմանները:

Կենտրոնական Ասիայում բնակվող ցեղերի ու ժողովուրդների պատմությամբ, լեզուների ուսումնասիրությամբ միաժամանակ սկսեցին զբաղվել ինչպես ռուսական դպրոցի ներկայացուցիչները՝ հայտնի արևելագետներ, որոնց աշխատանքները հիմնաքարային են արևելագիտության համար (Ն.Ս. Յադրինցև, Վ.Վ. Ռադլով<sup>2</sup>, Հ.Ն. Բիչուրին<sup>3</sup>, Վ.Վ. Բարտոլդ<sup>4</sup> և այլք), այնպես էլ եվրոպացի միսիոներներն ու գիտնականները: Առաջիններից էին ֆրանսիացի գիտնական Ա. Ռեմյոնան, անգլիացի ճանապարհորդ Ա.Ա. Մյոնոնը<sup>5</sup>, հայտնի բանահավաքներից էին Ջ.Քրոյինը<sup>6</sup>, Ջ.Վ.Գիլմորը<sup>7</sup> և այլք:

XIX դարի վերջին Ն.Ս. Յադրինցևի շնորհիվ հայտնաբերվեցին և մեկնաբանվեցին հին թյուրքական ռունական գրերը, որով սկսվեց հնագույն թյուրքական գրային համակարգի և լեզուների ուսումնասիրությունը:

Թյուրքալեզու ցեղերի և ժողովուրդների կազմավորման ուսումնասիրությունը առավել մեծ զարգացում ապրեց XX դարում՝ Խորհրդային միության գոյության շրջանում: Կենտրոնական Ասիայի հնագիտական

<sup>2</sup> Радлов В.В., “Къ вопросу объ уйгурахъ”, из предисловия къ изданию Кутадгу-билига В.В.Радлова, приложение къ LXXII –му тому записокъ императорской Академии наукъ, н. 2, Санкт-Петербургъ, 1893.

<sup>3</sup> Бичурин Н.Я. (о. Иакинф), Собрание сведений о народах, обитавших в Средней Азии в древние времена, Москва-Ленинград, в трех томах, 1950.

<sup>4</sup> Бартольд В.В., История изучения Востока в Европе и в России, лекции, С.Петербург, 1911; В.В.Бартольд, Сочинения, т. 5, Москва, 1968.

<sup>5</sup> Stein M.A., Serindia, Detailed Report of Explorations in Central Asia and Westernmost China, vol.II, Oxford, London, 1921.

<sup>6</sup> Curtin Yeremiah, Journey in the Southern Siberia, the Mongols, their religion and myths, Boston, 1909.

<sup>7</sup> Gilmore G.W., Animism, The Mongols, their religion and myths, Boston, 1919.

մշակույթների և մարդաբանական հետազոտությունների բնագավառում մեծ ավանդ ունեն խորհրդային գիտնականներ Վ.Պ. Ալեքսեևը<sup>8</sup>, Ս.Վ.Կիսելյովը<sup>9</sup> և այլք:

Լեզվաբանության բնագավառում նշանակալից են Ա.Ն.Գոնտովի<sup>10</sup>, Ս.Ե.Մալովի<sup>11</sup>, Վ.Գ.Գոնդրատսի<sup>12</sup>, Ս.Գ.Կյաշտորնու<sup>13</sup> և այլ հայտնի գիտնականների աշխատությունները:

Խորհրդային ժամանակաշրջանում ժողովուրդների ծագման և թյուրքագիտական հետազոտությունների շարքում կարևոր են և մեծ արժեք են ներկայացնում Լ.Ն. Գումիլյովի աշխատությունները<sup>14</sup>:

Լ.Ն. Գումիլյովի հայտնի ուսումնասիրություններից է «Հին թյուրքերը» ուսումնասիրությունը, որում հեղինակը հանգամանորեն ներկայացնում է պատմության ասպարեզում *թյուրք* ինքնանվանումը կրող ցեղերի իշխանության գալու և այդ ցեղերի իշխանության ներքո Կենտրոնական Ասիայի և քոչվոր ցեղերի զգալի մասի նվաճման պատմությունը<sup>15</sup>:

Արևելագիտության բնագավառում Խորհրդային ժամանակաշրջանի հետազոտություններն ընթանում էին նաև Կենտրոնական Ասիայի հանրապետություններում: Ատենախոսության նպատակների տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն դագախ և թաթար մի շարք գիտնականների աշխատություններ, որոնց շարքում անհրաժեշտ է նշել Ռ.Բեգերտիևովին<sup>16</sup>, Ա.Ամանջոլովին<sup>17</sup>, Ռ.Ֆայզարխանովին<sup>18</sup> և այլոց:

Ատենախոսության մեջ օգտագործվել են նաև արևմտյան ժամանակակից մի շարք գիտնականների, ինչպիսիք են ամերիկացի հայտնի արևելագետներ Կ.Սենգեսի<sup>19</sup>, Բ.Բեքվիթի<sup>20</sup>, Ս.Վիթթելի<sup>21</sup>, Է.Բլարքի<sup>22</sup>, Բ.Հարվի<sup>23</sup> և այլոց աշխատությունները:

Օգտագործվել են վերջին տարիներին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հրատարակված ժողովածուներ, որոնցում հավաքված են տարբեր հեղինակների աշխատություններ Կենտրոնական Ասիայի հին, միջնադարյան և ժամանակակից ժողովուրդների վերաբերյալ<sup>24</sup>:

Եվրոպական դարոցի հայտնի ներկայացուցիչներից է լեզվաբան Ա.Ս.Գաբեյնը, որը մեծ ավանդ ունի թյուրքագիտության և հատկապես հին թյուրքերենի ուսումնասիրության հարցում: Նրա հեղինակած «Հին թյուրքերենի քերականություն» գիրքը նույնպես մեծ արժեք է թյուրքագիտական հետազոտությունների համար<sup>25</sup>:

Թյուրքագիտական հետազոտությունները կարևորվել են Օսմանյան Կայսրության գոյության վերջին փուլում և առավել մեծ թափ են ստացել ժամանակակից Թուրքիայի հանրապետությունում:

Կենտրոնական Ասիայի նկատմամբ հետաքրքրության աճը Թուրքիայում արդի փուլում ակադեմիական նպատակներից գատ ունի նաև ընդգծված քաղաքական ենթատեքստ:

Ատենախոսության մեջ օգտագործվել են ինչպես քսաներորդ դարի կեսերի թյուրք հեղինակների, այնպես էլ ժամանակակից մի շարք թյուրք լեզվաբանների և պատմաբանների աշխատությունները: Թյուրքագիտական հետազոտություններում իրենց նշանակալի տեղն ունեն պատմաբաններ Հ.Ն. Օրբունի<sup>26</sup>, Շ. Սեֆերօղլուի<sup>27</sup>, լեզվաբաններ Վ. Հաթիբօղլուի<sup>28</sup>, Ս. Գյումեշի<sup>29</sup>, Օ.Ֆ. Սերթբայայի<sup>30</sup> և այլոց աշխատությունները:

<sup>8</sup> Алексеев В.П., География человеческих рас, Москва, 1974.

<sup>9</sup> Киселев С.В., Древняя история Южной Сибири, Москва, 1951.

<sup>10</sup> Кононов А.Н., Грамматика тюркских рунических памятников VII-IX вв., Ленинград, 1980.

<sup>11</sup> Малов С.Е., Памятники древнетюркской письменности Монголии и Киргизии, Москва-Ленинград, 1959.

<sup>12</sup> Кондратьев В.Г., Очерк грамматики древнетюркских рунических памятников, Ленинград, 1970.

<sup>13</sup> Кляшторный С.Г., Древнетюркские рунические памятники как источник по истории Средней Азии, Москва, 1964.

<sup>14</sup> Гумилев Л.Н., Этногенез и биосфера Земли, Ленинград, 1974, Гумилев Л.Н., Хунны и гунны, Москва, 2008.

<sup>15</sup> Гумилев Л.Н., Древние тюрки, Москва, 1967.

<sup>16</sup> Безертинов Р., Тенгрианство-религия тюрков и монголов, Набережные Челны, 2000.

<sup>17</sup> Amanjolov A., History of the ancient Turkic script (Genesis of Turkic runic alphabet), Almaty, 2003.

<sup>18</sup> Файзрахманов Г., Древние тюрки в Сибири и Центральной Азии, Казань, 2000.

<sup>19</sup> Menges K.H., The Turkic languages and peoples: an introduction to Turkic studies, Wiesbaden, 1994.

<sup>20</sup> Beckwith Ch., Empires of the Silk Road, A History of Central Eurasia, from the Bronze Age to the Present, Princeton and Oxford, 2009.

<sup>21</sup> Witzel M., O.Toshiki Kyoto, Central Asian Roots and acculturation in South Asia: Linguistic and archeological evidence from West Central Asia, Kyoto, 2005, pp. 95, 98-99 [www.homepage.ucl](http://www.homepage.ucl).

<sup>22</sup> Clark A. E., Ban Gu's History of Early China, New York, 2008.

<sup>23</sup> Harvey Bonney, Ancient World Leaders, Atilla the Hun, Philadelphia, 2003.

<sup>24</sup> History of civilizations of Central Asia, Volume II, The development of sedentary and nomadic civilizations, Paris, 1994.

<sup>25</sup> A.M. von Gabain, Eski türkçenin grameri, çeviren M.Akalin, Ankara, 2000.

<sup>26</sup> Orkun H.N., Türk Tarihi Bolum III, Ankara, 1946.

<sup>27</sup> Seferoğlu, Ş.K., Müderisoğlu A., Türk devletleri tarihi, Ankara, 1986.

<sup>28</sup> Hatiboğlu V., Türk tarihinin başlangıcı, Ankara 1981, ss.30-34.

<sup>29</sup> Saadettin Gömeç, Two historical clans of turks and mongols, Ankara, 2001, ss.1-6.

<sup>30</sup> Fikri Osman Sertkaya, Göktürk (Runik) Harfli Yazıtların Envanter, Alfabe ve Bibliyografya Problemleri Uzerine, Dil Arastırmaları Dergisi, 2008, 7-34 ss.; Korkmaz Zeynep, Türk Dili Uzerine Arastırmalar, C.1, Kaşgarlı Mahmud ve Divanu Lugati't Turk, Ankara 1995; Turan M., Türk Halk Edebiyatı, Türk Destanları, Anadolu Üniversitesi, 1998; Busra Esranlı Behar, Turkism in Turkey and Azerbaijan in 1990-s [www.tdp](http://www.tdp) Turkiye Demokratik Pilatformu, pp.12-13.

Ատենախոսության շրջանակներում տեղ են գտել նաև առանձին գիտական հոդվածներ համացանցից, որոնք արտացոլում են ներկայիս թյուրքագիտության նոր ուղղություններն ու հիմնախնդիրները<sup>31</sup>:

Ատենախոսության մեջ ներկայացված են չին պատմագրության պատմահայր Միմա Յյանի<sup>32</sup>, հունահռոմեական հեղինակներ Պրիսկուս Պանիացու, Մենանդրոս Պրոտեկտորի թողած հիշատակությունները, ինչպես նաև անդրադարձել է կատարվում մի շարք այլ հեղինակների ստեղծագործություններին, որոնցում հավանական է, որ հիշատակվել են թյուրքալեզու ժողովուրդների նախնիների ցեղանունները<sup>33</sup>:

Հայկական աղբյուրներում թյուրքալեզու ցեղերի հնարավոր նախնիների մասին հիշատակություններ կան Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ<sup>34</sup>: Անդրադարձ է կատարվել միջնադարյան պատմիչներ Թովմա Արծրունու<sup>35</sup>, Արիստակես Լաստիվերցու<sup>36</sup> ստեղծագործություններին, որոնցում հիշատակվում են թյուրքալեզու ցեղերը:

Ատենախոսության մեջ օգտագործվել են արաբական աղբյուրները և դրանց առնչությամբ կատարված Վ.Բարտոլդի<sup>37</sup>, Հ.Ժամկոչյանի<sup>38</sup> և այլոց ուսումնասիրությունները<sup>39</sup>:

Թյուրքագիտական հետազոտությունների համար կարևորագույն աղբյուր է միջնադարյան հեղինակ Մահմուդ Կաշգարիի «Թյուրքական լեզուների դիվանը» ստեղծագործությունը, որն, ըստ էության, թյուրքալեզու ցեղերի նկարագրության առաջին ընդհանրական փորձն է<sup>40</sup>:

<sup>31</sup> Дёрфер Г., О языке гуинов, Москва, 1981, 183-187, <http://www.antat.ru/cgi-bin/img.pl/files/NT2011/NT-4-2011-23.pdf>; Osterholm T., Gog and Magog in History <http://www.accd.edu/sac/history/keller/Mongols/empsub1.2009>.; Özyetgin A. Melek, Türk dilinin tarihsel dönemleri s.4 <http://www.humanity.ankara.edu.tr/turklehcileri/hakkimizda>

<sup>32</sup> Сыма Цянь, Исторические записки (Ши Цзи) (XXXII,8) ТОМ VIII, перевод и комментарии Р. В. Вяткина и В. С. Таскина Москва, 2002 (վաղ հրատարակությունները՝ 1972, 1984, 1986).

<sup>33</sup> Гаркавец А.Н., Великая степь в античных и византийских источниках, Алматы, 2005; The geography of Strabo with an English translation, by Horace Leonard Jones, Ph.D., LL.D. Cornell University, in eight volumes, vol.V, London, 1961.

<sup>34</sup> Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Թարգ. Մտ. Մալխասյանի, Երևան, 1990.

<sup>35</sup> Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն Տան Արծրունեաց, Երևան, 1985.

<sup>36</sup> Պատմություն Արիստակես վարդապետի Լաստիվերցոյի, Թիֆլիս, 1912.

<sup>37</sup> Бартольд В. В. Сочинения, т. VIII. Работы по источниковедению. Извлечение из сочинения Гардизи "Зайн ал-ахбар". Приложение к "Отчету о поездке в Среднюю Азию с научною целью. 1893-1894 гг." Москва, 1973.

<sup>38</sup> Жамкочян А. С., Ибн ал-Факих, Ахбар ал-Булдан, (Известия о странах), Ереван, 1979.

<sup>39</sup> Арабские источники VII-X вв., ат-Табари, история пророков и царей (Та'рих ар-русул ва-л-мулук), (пер.Л.Е.Куббеля,В.В.Матвеева), т. 1., Москва-Ленинград, 1960; Ибн ал-Факих ал-Хамадани. Известия о странах, Арабские источники о тюрках в раннее средневековье, Баку, 1993.

<sup>40</sup> Kasgarlı Mahmud, Divanü lügatit-Türk, Istanbul, 2005.

Միջնադարյան հեղինակներ Ֆազլալահ Ռաշիդ ադ Դինի<sup>41</sup> և Աբուլ Ղազիի<sup>42</sup> շնորհիվ պահպանվել են թյուրքալեզու ցեղերի մասին պատմող ավանդագրությունները, որոնք նույնպես տեղ են գտել ատենախոսության շրջանակներում և նրանց ուսումնասիրության համար բազմաշերտ կուրթեր են պարունակում:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

«Թյուրքալեզու ժողովուրդների նախապատմությունը» վերնագրով I գլխի «Վերջանալու տեղեկություններ» վերնագրով ենթագլխում ներկայացվում են Կենտրոնական Ասիայի էթնիկական բնութագիրը հնագույն ժամանակներում և թյուրքալեզու ժողովուրդների ծագումնաբանությանն առնչվող հայտնի տեսությունները:

Ելնելով ատենախոսության նպատակներից՝ Կենտրոնական Ասիայում հնդեվրոպական լեզուների հիմնավոր առկայության մասին գիտության մեջ գերիշխող տեսակետի լույսի ներքո ներկայացվում են այս տարածքում քննարկվող ժամանակաշրջանում թյուրքալեզու ժողովուրդների ծագման վերաբերյալ վարկածները:

Հարկ է նշել, որ ներկայումս էլ թյուրքական պատմագրության մեջ դեռևս փորձեր են կատարվում Առաջավոր Ասիայում թյուրքալեզու էթնոլեզվական տարրեր հայտնաբերելու ուղղությամբ: Սակայն, ի տարբերություն ավելի վաղ շրջանի հեղինակների, այժմ դրանք ներկայացվում են քողարկված, քանզի Թյուրքիայի հանրապետությունում հինարևելյան ուսումնասիրություններում ներգրավված և միջազգային ասպարեզում ընդունված գիտականության չափանիշներին համապատասխան մեծ քանակությամբ բարձրորակ մասնագետների առկայությունը զգալիորեն փոխել է իրավիճակը: Այսօր արդեն հնարավոր չէ հայտարարել, թե շումերները կամ իտեթերը թյուրքալեզու են եղել, քանի որ այդ լեզուները բավանականաչափ լավ են ուսումնասիրված: Այդ է պատճառը, որ որոշ թյուրք հեղինակներ փորձում են հեռավոր ազգակցական կապ տեսնել հին Առաջավոր Ասիայի քաղաքական և մշակութային կյանքում կարևոր դեր խաղացած խուրրիների և թյուրքալեզու աշխարհի հետ՝ հենվելով միայն մի «փաստարկի» վրա, այն է՝ խուրրիերենի կցական լեզու լինելու հանգամանքը: Կենտրոնական Ասիայի հնագույն ժողովուրդների շարքում թյուրքալեզու ժողովուրդների նախնիներին փնտրող վարկածներից մեկը հիմնված է «*Թուրան*» հասկացության վրա:

<sup>41</sup> Фазлаллах Рашид ад Дин, Джами-ат-таварих, Огуз-Наме, перевод с персидского, комментарии, примечания и указатели Р.М.Шукоровой, Баку, 1987.

<sup>42</sup> Кононов А.Н., Родословная туркмен, сочинение Абу-л-Гази хана хивинского, Москва-Ленинград, 1958.

Կենտրոնական Ասիայի տարածքի զգալի մասը հայտնի է նաև *Թուրան* անվամբ, որը ծագում է հին իրանական գրադաշտական սուրբ գրքում՝ «Ավեստայում», հիշատակված Կենտրոնական Ասիայի քոչվոր ցեղերից մեկի *T-ura*՝ «*Թուրա*», անունից: Ավեստայի XVII Յաշտում՝ Աշի աստվածուհուն նվիրված հիմնում, նրանք հիշատակվում են որպես իրենց արյունակից և ստակյաց իրանցիների թշնամիներ:

*Թուրան*-ը իրանական տերմին է, որով կոչվել է Իրանից հյուսիս-արևելք ընկած երկրամասը: Այն բնակեցված է եղել քոչվոր ցեղերով, որոնք հիշատակվում են «*թուրա*» ընդհանուր անունով:

*Թուրեր* և *թուրքեր* ցեղանունների նույնականացման մասին են վկայում միջնադարյան հեղինակների ստեղծագործությունները: Որպես ցայտուն օրինակ՝ ներկայացվում է միջնադարի հռչակավոր պոետ Ֆիրդուսու «*Շահնամեն*»:

«Շահնամեում» *Թուրանը* և *թուրքական ցեղերի* բնակության տարածքներն ինքնաբերաբար նույնականացվում են, և նույնիսկ *թուր* և *թուրք* ցեղանունները զանազանելու անհրաժեշտություն չի առաջանում:

«Շահնամեում» հանդես եկող հայտնի կերպար է Աֆրասիաբը (Ավեստա V յաշտ), որը իրանցիների գլխավոր թշնամին է, ում հետ իրանցիները մշտական պատերազմների մեջ են եղել: Աֆրասիաբը «Շահնամեում» *Թուրանի* շահն էր՝ կախարհ, որի դեմ պայքարում էին իրանական էպոսի հերոսները՝ Ռուսամբ, Միավուշը և այլն:

Կարախանյան դինաստիայի (940-1040թթ.) ներկայացուցիչներն ընդունում էին, որ իրենք Աֆրասիաբի ժառանգներն են, իսկ Կարախանյան դինաստիան արաբական աղբյուրներում կոչվում էր «Աֆրոսիաբի տուն»:

Շարկ է նշել, որ Ֆիրդուսու ապրած ժամանակաշրջանում (X-XIդդ.), Կենտրոնական Ասիայում կիսաքոչվոր թուրքալեզու ցեղերի մեջ արդեն տարածված էր *թուրք* ցեղանունը, արաբապարսկական գրավոր մշակույթում արդեն առկա էր այդ ցեղերին տրվող ընդհանրացնող անվանումը, իսկ մեծ բանաստեղծը իր ստեղծագործագործության մեջ արձանագրել է հազարամյակների պատմություն ունեցող իրանական մշակույթի ավանդազրույցները՝ ամեննին նպատակ չունենալով նույնացնելու թուրքալեզու ցեղերին ու արիական ծագում ունեցող թուրերին:

Այն տեսակետը, որ թուրքերը Ավեստայում հիշատակվող *թուրերն* են, հասկանալիս զարգացվել է XIX դարում և XXդ. սկզբին, երբ թուրքականության գաղափարախոսությունը բուռն զարգացում էր ապրում:

Խնդիրը *թուրք*, *թուրք* և *թուր* ցեղանունների հնչողության նմանության մեջ էր, որոնց տարբերակմանը միջնադարում մեծ նշանակություն չէր տրվում:

Այս երեք ցեղանունների նմանության գիտական հիմնավորումներով փորձ էր արվում թուրքերի նախնիներին արդեն իսկ ձևավորված *թուրք* ցեղանունով փնտրել Կենտրոնական Ասիայում մ.թ.ա. I հազարամյակով թվագրվող հնագիտական և գրավոր աղբյուրներում:

Մինչդեռ այս վարկածը հերքվում է արդի գիտության կողմից, քանի որ ապացուցված է, որ մ.թ.ա. II-I հազարամյակներում Կենտրոնական Ասիայում

տարածված էին հնդիրանական բնակչություն և լեզուներ, իսկ թուրերը իրանական ցեղեր են եղել, որոնք պայքարի մեջ էին *իրերի* կամ *արերի* հետ:

Մյուս կողմից, *թուրք* ցեղանունը առաջացել է լիովին այլ լեզվամշակութային միջավայրում, շատ ավելի ուշ, քան *թուրա-ն* (տե՛ս Գլուխ III):

«Կենտրոնական Ասիայի նյութական մշակույթը (մ.թ.ա. III հազ. - մ.թ. V դար)» վերնագրով ենթադրվում ներկայացվում են Կենտրոնական Ասիայի հնագիտական ուսումնասիրությունների շնորհիվ հայտնաբերված նյութերը, որոնք հնարավորություն են տալիս այս տարածքի մշակույթները բաժանել և դիտարկել ըստ ժամանակաշրջանների: Ներկայացվում է նաև թուրքալեզու ժողովուրդների սկյութա-սակական ծագման մասին տեսությունը:

Մասնավորապես, թուրք պատմաբան Թ.Յ. Օզթունան սկյութների համարում է հին *թուրքական* ցեղեր: Ըստ նրա՝ սկյութների գիրը գյոթթյուրքերի (մ.թ. VII-VIIIդդ. հայտնի ցեղեր, որոնց են պատկանում այս ժամանակահատվածով թվագրվող ենիսեյասօխյոսյան արձանագրությունները) այբուբենին շատ մոտ է:

Սկյութների և սակերի էթնոլեզվական պատկանելությունն այդ աստիճան կոնկրետացնելը և նախաթուրքականին մոտեցնելը սխալ է, քանի որ տվյալ ժամանակաշրջանում թուրքերի կամ նրանց լեզվի առկայության մասին որևէ ապացույց չկա: Մինևույն ժամանակ Արևելյան Կենտրոնական Ասիայում «սկյութական» ժամանակաշրջանում ընթանում էր այթայական լեզուների ձևավորման գործընթացը, որի հիմքում է, որ հնարավոր է գտնել մոնղոլական և թուրքական նախալեզուների հետքեր (տե՛ս Գլուխ III):

Անտիկ շրջանի հունական աղբյուրներում հիշատակված *սկյութ* ցեղանվան տակ հասկացվում են բազմաթիվ ցեղեր, որոնք ապրել են Սև և Կասպից ծովերից հյուսիս և հյուսիս-արևելք ընկած տարածքներում՝ հաճախ առանց հյուսիս և հյուսիս-արևելք ընկած տարածքներում՝ հաճախ առանց մասնավորեցնելու նրանց իրական ցեղանունները: Սկյութները մ.թ.ա I հազարամյակում մեծ ազդեցություն են ունեցել այն տարածքների բնակչության վրա, որտեղ նրանք հաստատվել են՝ բնականաբար ներառելով նրանց իրենց կազմի մեջ, ուստի սկյութները կամ սակերը էթնիկական տեսանկյունից միատարր չեն եղել:

Մ.թ.ա. VIII-VII դդ. Կենտրոնական Ասիայի արևելյան տափաստանային շրջանները, որոնք ներկայումս կազմում են Մոնղոլիայի մասը, և Թարիմի ավազանի արևելյան շրջանը, բնութագրվում են քոչվոր կենցաղավարմամբ: Ժամանակակից Չինաստանի տարածքում բնակվող մոնղոլիդ բնակչությունը, ի տարբերություն իր հարևանների, նստակյաց էր:

Օրդոսի և Կենտրոնական Մոնղոլիայի տարածքում հայտնի ցեղային միավորումներն էին հուանգ-նունները, արևելյան Մոնղոլիայում և Մանչուրիայում՝ թունգ-հունների, Գանսուի, Օրդոսի և Ջունգարիայի տարածքում՝ յունչիների ցեղային միավորումները:

Ներկայիս Մոնղոլիայում և Ջունգարիայում կատարված պեղումների արդյունքում հայտնաբերվել են դամբարանադաշտեր, որոնցում կան սալաքարե թաղումներ՝ զարդարված կենդանիների պատկերներով: Դամբարաններում

առկա են բազմաթիվ ընտանի կենդանիների ոսկորներ, ինչպես նաև բրոնզե և արծաթե իրեր, որոնք ձևով նման են սկյութական բրոնզե իրերին: Չինաստանի, Մոսկովի և Աֆղանստանի տարածքներում հայտնաբերված կենցաղային իրերը վկայում են այդ վայրերի բնակիչների միջև առկա սերտ կապերի և առևտրական փոխառնությունների առկայության մասին:

Հաջորդ ժամանակաշրջանը, որն առավել մեծ նշանակություն ունի թյուրքալեզու ժողովուրդների կազմավորման և այլթայական լեզուների ձևավորման համար, «սարմատահոնականն» է:

Թյուրքալեզու ժողովուրդների ծագման հաջորդ վարկածը կապվում է այս ժամանակաշրջանում Չինաստանի հյուսիսում և հյուսիս-արևմուտքում *հուանգ-նու*, իսկ ավելի ուշ՝ *սյուննու*, *հոն* ցեղանուններով հայտնի ցեղային միության պատմության հետ: Սարմատահոնական ժամանակաշրջանում Կենտրոնական Ասիան հայտնի էր նաև այլ իրանալեզու քոչվոր ցեղերի առկայությամբ, ինչպիսիք էին սարմատական ցեղերը: Նրանք տարածված էին Հյուսիսային Կովկասից մինչև ներկայիս Արևմտյան Ղազախստան ընկած շրջաններում: Սարմատական ցեղերի կազմում հիշատակվում են պանները, աորսները, յազիգները և այլն:

**«Թյուրքալեզու ժողովուրդների մարդաբանական բնութագրի» վերնագրով ենթագլխում** ներկայացվում են թյուրքալեզու ժողովուրդներից մի քանիսի մարդաբանական հատկանիշները:

Թյուրքալեզու ժողովուրդներից յակուտները (ինքնանվանումը՝ սահա) ապրում են Արևելյան Սիբիրում Լենա գետի մերձակա շրջաններում: Նրանք տիպիկ մոնղոլոիդներ են՝ ցածրահասակ, ուղիղ սև մազերով, քիչ մազածածկությամբ, խիստ արտահայտված այտուկներով: Նրանց մեջ հանդիպում են նաև մետիսներ՝ կապույտ կամ մոխրագույն աչքերով, բաց մազածածկությամբ, սակայն նախորդների նման խոսում են յակուտերենով, որն իրենց մայրենի լեզուն է:

Ղազախները, ղըրղզները և ուզբեկները հարավսիբիրյան ռասայական հատկանիշ ունեցող ժողովուրդներ են, որոնք միջանկյալ տեղ են գրավում եվրոպեոիդ և մոնղոլոիդ ռասայական տիպերի միջև: Ուլդուրները (Ուլդուրիա՝ Չինաստանի Սինցյան ինքնավար մարզ) և նոդայները (ապրում են Հյուսիսային Կովկասում և Պովոլժիեում) նույնպես միջանկյալ տեղ են գրավում եվրոպեոիդ և մոնղոլոիդ ռասաների միջև:

Կենտրոնական Ասիայում բավական տարածված է նաև պամիրաֆերգանյան ռասայական տիպը:

Ըստ հայտնի մարդաբան Վ. Ալեքսեևի՝ պամիրաֆերգանյան տիպի կրողներն են հատկապես ուզբեկների մի մասը և տաջիկները, որոնց բրախիկեֆալ եվրոպեոիդ հատկանիշներում հանդիպում է մոնղոլոիդ խառնուրդ:

Թյուրքալեզուների շրջանում առկա են նաև ինչպես մոնղոլոիդ, այնպես էլ կասպյան տիպին բնորոշ հատկանիշներ: Կասպյան տիպը հնդաֆղանական ռասայական տիպի առանձին ճյուղ է, որին բնորոշ են մուգ պիգմենտավորումը, մուգ մազերը և աչքերը:

Իրանի տարածքում նույնպես կա թյուրքալեզու բնակչություն. դրանցից են Ֆարսի, Հարավային Սպահանի շրջանում քոչվոր թյուրքալեզու կաշկայական ցեղերը, կալաջները, թյուրքալեզուները, Արևելյան, Արևմտյան Իրանական Աղբյուրների նահանգների թյուրքալեզու բնակչությունը և այլն:

Ֆարսի կաշկայական ցեղերի ծագման մասին տարբեր վարկածներ կան: Ըստ որոշ գիտնականների՝ նրանք սերում են թյուրքալեզու օգուգական ցեղերից, հնարավոր է՝ խազարներից կամ *բայթ* անունով թյուրքալեզու ցեղերից, որոնք միջնադարում են հաստատվել Ֆարսում: Ժամանակակից կաշկայական ցեղերից են *դարբեշուրի*, *շեշբուլյուկի*, *ամալե* ցեղերը և այլն:

Ներկայիս Աղբյուրների Հանրապետության տարածքը բնակեցված է ինչպես իրանալեզու, այնպես էլ թյուրքալեզու բնակչությամբ: Աղբյուրների բնակչությունը մարդաբանական առումով մեծամասամբ պատկանում է կասպյան տիպին: Աղբյուրների լեզուն աղբյուրներենն է, որը ժամանակակից թյուրքերենի հետ միասին ընդգրկված է միևնույն թյուրքական լեզուների օրուգական խմբի կազմում:

Բազմաթիվ թյուրքալեզու ցեղեր, որոնք միջնադարից բնակվում են ներկայիս Աղբյուրների Հանրապետության տարածքում (քաջարներ, յուրյուբներ, ավշարներ և այլն), մեծամասամբ իրանալեզու և կասպյան ռասայական հատկանիշներ ունեցող բնակչության կողմին, ձեռք են բերել նման ռասայական հատկանիշներ՝ պահպանելով լեզուն, որն այսօրվա աղբյուրներենն է:

Պատմական հանգամանքների բերումով թյուրքալեզու ցեղերը պատմական Ատրպատականի տարածքում քաղաքական և տնտեսական գերիշխանություն են ունեցել, ինչը ազդել է նաև բնակչության շրջանում ներկայիս աղբյուրներենի տարածմանը (այսպես կոչված «Էլիս-դումինանտություն» երևույթը):

Առաջավոր Ասիայում թյուրքալեզու ցեղերի մասին տեղեկություններ հաղորդվում են հայկական, բյուզանդական աղբյուրներում դեռևս վաղ միջնադարից, նաև արաբական աղբյուրներում (տե՛ս Գլուխ II):

Ժամանակակից Թուրքիայի Հանրապետության բնակչության էթնոմարդաբանական բնութագրի նույնպես միատարր չէ:

Ներկայիս Թուրքիայի բնակչության մարդաբանական բնութագիրը բազմազան է. կարելի է հաղիպել գրեթե բոլոր ռասայական տիպերի, որոնք համարվում են թյուրքեր և խոսում են թյուրքերեն: Էթնիկ թյուրքին մարդաբանորեն գրեթե հնարավոր չէ տարանջատել Թուրքիայում ապրող այլ ազգային կամ կրոնական փոքրամասնության ներկայացուցիչներից, քանի որ մի քանի դար շարունակվող ձուլման, ինչպես նաև տվյալ տարածքին ադապտացվելու արդյունքում էթնիկ թյուրքերը այժմ ներկայանում են Փոքր Ասիայի ժողովուրդներին բնորոշ ռասայական հատկանիշներով:

**«Թյուրքական լեզուների ձևավորման խնդիրը» վերնագրով ենթագլխում** ներկայացվում են թյուրքական լեզուների ծագման մասին տեսությունները:

Թյուրքական լեզուների ծագման մասին նույնպես գոյություն ունեն տարբեր տեսություններ: Դրանք առնչվում են ստեղծման ժամանակին, միջավայրին և այն լեզվական հիմքին, որից առաջացել են:



Թյուրքական լեզուների հետազոտման խնդիրները դասակարգվում են այսպես.

- Ալթայական լեզուների՝ միննույն հիմքով ծագման, այսինքն, մայր ալթայական լեզվից այլ լեզուների ձևավորման խնդիր:
- Փոխառնչությունների հետևանքով ալթայական լեզուների մոտ հատկանիշների ձեռքբերման խնդիր: Այսինքն՝ առանձին լեզուների ձևավորում որոշակի տարածքում տարբեր էթնիկական խմբերի շրջանում, որոնք փոխառնչությունների հետևանքով են ձեռք բերել մոտ հատկանիշներ: Ալթայական լեզուների՝ թյուրքերենի, մոնղոլերենի և թուրքուգամանջտուրական լեզուների նույն հիմքից ծագման մասին տեսությունն առաջ է եկել դեռևս XIX դարում: Այս տեսության կողմնակիցներից էին հայտնի լեզվաբաններ Գ.Շ. Ռամսբեդը և Մ.Ա. Կաստրենը, որոնք գտնում էին, որ մայր ալթայական լեզվից ածանցվել են վերոնշյալ լեզուները:

Մոնղոլերենի, թուրքուգամանջտուրական լեզուների և թյուրքական լեզուների ծագման մասին կա մեկ այլ տեսություն, ըստ որի այս լեզուները ձևավորվել են որպես ինքնուրույն լեզուներ, իսկ ընդհանրությունները բացատրվում են այդ լեզուներով խոսող ցեղերի և ժողովուրդների փոխառնչություններով և փոխազդեցություններով: Այս տեսության կողմնակիցներից են հայտնի լեզվաբաններ 3. Շչերբակը, Գ. Կլաուսենը և այլք:

Արդի գիտության կողմից առավել ընդունելի տարբերակ է համարվում առաջին տեսությունը, ըստ որի՝ ալթայական լեզուների ձևավորման նախադրյալները նույն հիմքն են ունեցել, ինչ հնդեվրոպական լեզուներինը: Այսինքն, նախալեզուն առաջացել է որոշակի աշխարհագրական տարածքում որոշակի էթնիկական խմբի շրջանում, ապա այդ լեզուն կրող էթնիկական խմբերի տարածմամբ և այլ խմբերի հետ փոխառնչությունների հետևանքով ձևավորվել են նրա ճյուղերը:

**«Թյուրքալեզու ժողովուրդների ընդհանուր էթնոնիմները և դրանց նշանակությունը (թյուրք, թաթար, թուրքմեն էթնոնիմները)՝ վերնագրով ենթազիխում քննարկվում է էթնոնիմի նշանակությունը ժողովրդի էթնիկական ինքնագիտակցության ձևավորման հարցում և ներկայացվում են թյուրքալեզու ցեղերին երբևէ տրված միավորող նշանակություն ունեցող ցեղանունները:**

Այդ տեսանկյունից հետաքրքիր է, թե թյուրքալեզու ժողովուրդներին ի մի բերող ինչ ցեղանուններ են օգտագործվել դեռ միջնադարից, և մեր օրերում թյուրքալեզու ժողովուրդները որքանով են իրենց մեջ պահում այդ ինքնագիտակցությունը:

**«Կենտրոնական Ասիայի կրոնական բազմազանությունը. Թենգրականություն» վերնագրով ենթազիխում ներկայացվում է ալթայական մշակութային համակարգում լայն տարածում ունեցած հավատալիքային համակարգը կամ կրոնը, որը մեծ տարածում է ունեցել թյուրքալեզու ժողովուրդների շրջանում: Դա թենգրիականությունն է, որը բառացի թարգմանվում է որպես երկնապաշտություն (բառը ծագում է թենգրի-երկինք, կապույտ բառից):**

Ենիսեյաօրիսեյան արձանագրությունները, որոնցից բաղված են տեղեկություններ թյուրքալեզու ցեղերի մեջ տարածված թենգրիականության մասին, ուղղակիորեն վկայում են թյուրքու-թյուրքերի մեջ դրա տարածված լինելու մասին:

**«Թյուրքալեզու ժողովուրդները պատմագրական, վիճակի և բանահյուսական աղբյուրներում» վերնագրով II գլխի «Պատմագրական աղբյուրներ» վերնագրով ենթազիխի «Չինական աղբյուրներ» ենթակետում ներկայացվում են թյուրքալեզու ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար կարևորագույն նշանակություն ունեցող և ժամանակագրորեն մատենագրական ամենավաղ աղբյուրները՝ հին չինական տարեգրությունները:**

Դրանց շարքում կարևորագույն աշխատություններից է մ.թ.ա. II-I դարերում ապրած հայտնի պատմիչ Սիմա Ցյանի (մ.թ.ա. 140-90-ական թթ.) «Շի Ցզի» («Պատմական գրվածքներ») անվանումը կրող ստեղծագործությունը, որում ներկայացված են արժեքավոր տեղեկություններ Կենտրոնական թագավորության (Չինաստանի հնագույն անվանումը) հարևանությամբ բնակվող ցեղերի և ժողովուրդների մասին:

Պատմության այս ժամանակահատվածի և Մաոդուն շանյույի մասին տեղեկությունները շատ կարևոր աղբյուր են հնագույն թյուրքալեզու ցեղերի ուսումնասիրության համար: Հոնների պատմության այս շրջանը նաև հիմք է հանդիսանում թյուրքալեզու ժողովուրդների բանահյուսական նյութերի հետ համեմատություններ անցկացնելու համար: Հոնական ցեղային միության՝ մասնավորապես նրա Մաոդուն ցեղապետի կյանքի մասին Սիմա Ցյանը պատմում է իր ստեղծագործության 110-րդ գլխում, որը կոչվում է «Լե չժուան» կյանքի նկարագրություն»:

**«Հունահռոմեական աղբյուրներ» վերնագրով ենթակետում ներկայացվում են թյուրքալեզու ցեղերի հավանական նախնիների մասին հիշատակությունները և թյուրք ցեղանվան ի հայտ գալու ժամանակաշրջանը նրանցում:**

Քննարկվում են միջնադարում հայտնի հոնական ցեղերի, նրանց հայտնի առաջնորդ Աթիլլայի մասին հիշատակությունները և նրանց հնարավոր առնչությունները թյուրքալեզու ցեղերի հետ:

Աթիլլայի մասին հիմնավոր տեղեկություններ են հաղորդվում բյուզանդական պատմիչ Պրիսկուս Պանիացու շնորհիվ, ով եղել է Արևելահռոմեական կայսրության կայսր Թեոդորոս II-ի Աթիլլայի մոտ ուղարկված պատվիրակության կազմում: Նա հեղինակել է «Բյուզանդական պատմություն» աշխատությունը, որը բաղկացած է ութ գրքից: Պրիսկուսի ստեղծագործությունից մեզ է հասել «Գոթական պատմություն»-ը, որում հեղինակը հանգամանորեն ներկայացնում է Աթիլլայի և Բյուզանդիայի փոխհարաբերությունները 433-474թթ.:

Հայտնի աղբյուր է նաև պատմիչ Ամմիանոս Մարկելլինոսի գրույցը հոնների մասին գոթերի առաջնորդ Ռոմուլի հետ:

Թյուրք ցեղանունը բյուզանդական պատմագրության էջերում ի հայտ է գալիս մ.թ. VI դարում:

Մենանդրոս Պրոտեկտորի «Պեսպանների մասին» ստեղծագործության մեջ պահպանվել են տեղեկություններ, որոնք պատմում են մ.թ. 568թ. թյուրքական հաքան Բստեմիի մոտ Հուստինիանոս II-ի ուղարկած դեսպանության մասին: Այս ժամանակաշրջանում արդեն գոյություն ունեւ թյուրքու-թյուրք ցեղանունով հայտնի ցեղախմբերի միությունը, որը պատմությանը հայտնի է *Թյուրքական Հաքանություն* անունով: Այս ժամանակաշրջանը հայտնի է Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև պայթարով, որում իր դերակատարությունն ունեւ թյուրքերի հաքանությունը:

**«Հայկական աղբյուրներ» վերնագրով ենթակետում** ներկայացվում են պատմական Հայաստանի հարևան ցեղերի և ժողովուրդների մասին արժեքավոր տեղեկություններ, որոնք պահպանվել են հայ պատմիչներից շատերի երկերում: Պատմահայր Մովսես Խորենացու *«Հայոց պատմության»* մեջ հանդիպում են հիշատակություններ *սկյութացիների, մասքութների (մասագետների), քուշանների, բասիլների, Հոնաց երկրի* մասին և այլն: Մովսես Կաղանկատվացու կողմից VII դարում կազմված «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկում հավաքված են հնագույն ժամանակներից մինչև VII դ. վերջն ընկած ժամանակահատվածում Աղվանքի պատմության տարբեր դրվագներին վերաբերող մի քանի հեղինակների երկեր: Երկը շարունակել և ամբողջացրել է Մովսես Դավաթուրանցին՝ հասցնելով շարադրանքը մինչև X դարի կեսերը: Երկի Թ ցլխում՝ *«Պատմութիւն յաղագս յարուցման ազգաց բարաբարոսաց եւ պէսպէս անցից տիեզերահեծ տագնապին, որ եղեւ աշխարհաց»*-ում, պատմվում է վրաց Հերակլ արքայի հրամանով Կասպից ծովի հյուսիսային ափերին բնակվող խազարների պարսից Խոսրով արքայի դեմ կազմակերպած արշավանքի մասին:

Մ.թ. IX-X դարերի պատմագրության մեջ մեծ ավանդ ունի նաև Թովմա Արծրունին, որի *«Պատմութիւն Տանն Արծրունեաց»* երկասիրության մեջ կան հիշատակություններ Գենտրոնական Ասիայի տեղանունների և ժողովուրդների մասին: XI դարի հայ պատմագիր Արիստակես Լաստիվերցու *«Պատմութիւն Արիստակեսայ վարդապետի Լաստիվերցոյ»* երկում, որտեղ հեղինակը ներկայացնում է X-XI դդ. Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները, Անիի ավերումը, պատմում է նաև դեպի Հայաստան թյուրքալեզու ցեղերի ներխուժման մասին:

Հայ պատմագրության մեջ Թովմա Արծրունին և Արիստակես Լաստիվերցին այն հեղինակներից են, ովքեր օգտագործում են *Թուրքաստան* հասկացությունը, որով, թերևս, կարելի է ենթադրել, որ լեզվական և ռասայական ընդհանուր հատկանիշներով միավորված թյուրքալեզու ցեղերն ընկալվում էին իբրև մեկ ամբողջական էթնոլեզվական ընդհանրություն:

**«Արաբապարսկական աղբյուրներ» վերնագրով ենթակետում** ներկայացվում են միջնադարյան առավել հայտնի հեղինակների հիշատակությունները թյուրքալեզու ցեղերի մասին:

Թյուրքալեզու ցեղերի ուսումնասիրության բնագավառում մեծ հետաքրքրություն է ներկայացնում Աբու Ջաֆար աթ Թաբարիի (ծնվ. 839թ..) *«Թարիհ ար-ռուսուլ վ' ալ մուլուք»*՝ «Պատմություն մարգարեների և արքաների մասին» երկը:

Արդ թյուրքալեզու ցեղեր հիշատակվում են արաբ հեղինակ Աբու Ուսման Ամր իբն Բահր ալ Ջահիզի (մահացել է 863թ.)՝ *«Քիթաբ ալ բայան վա-թ թարիհ-ի»*՝ *«Նամակ ալ Ֆարիհ հարանին թյուրքերի և խալիֆական գորքի այլ արժանիքների մասին»* հատվածում, որը գրվել է 833-842թթ. ընթացքում: Հեղինակը պատմում է Աբբասյան դինաստիայի բանակի կազմում հանդես եկած թյուրքալեզու ցեղերի զորամիավորումների մասին՝ համարելով նրանց և արաբներին հավատի եղբայրներ և տեղեկություններ է հաղորդում թյուրքերի (թյուրքալեզու ցեղերի) մարտական առավելությունների, հանդերձանքի և սովորույթների մասին:

Իբն ալ Ֆակիի ալ Համադանիի *«Ախբար ալ-Բուլդան»*՝ (*Տեղեկություններ երկրների մասին*), ստեղծագործությունը մեզ հասել է հատվածաբար: Հատկապես կարևոր նշանակություն ունեցավ հեղինակի աշխատության մեջեղական ձեռագրի հայտնաբերումը: «Ախբար ալ-Բուլդան»-ը գրվել է մոտավորապես 903թ.:

«Ախբար ալ Բուլդանում» *թյուրքեր* հասկացության տակ ներառված են բազմաթիվ թյուրքալեզու ցեղեր, որոնց շարքում հատկապես նշվում են *դոքուզուզերը*՝ ուլդուրական ծագման ցեղերը:

Հաջորդ հեղինակը, որը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում թյուրքալեզու ցեղերի մասին, Ահմեդ իբն Ֆադլանն է: Աբբասյան խալիֆ ալ Մուլթադիիի հրամանով (908-932թթ.) ճանապարհորդել է Վոլգյան բուլղարների մոտ՝ նրանց խանի հրավերով: Պատճառը բուլղարների ցանկությունն էր արաբների օգնությամբ ազատվել խազարների տիրապետությունից, փոխարենը Իսլամ ընդունելու պայմանով: Նա արժեքավոր տեղեկություններ է հաղորդում գուզերի, բաշկիրների, խազարների, բուլղարների մասին:

Հաջորդ հեղինակը Աբու ալ Ալա Մուհամմեդ Ալի բ. Ալ-Խատուլն է, ով ապրել է Ղազնևիների ժամանակաշրջանում (961-1186 թթ.), եղել է պալատական գրիչ (մահացել է 1058թ.): Հայտնի է նրա ստեղծագործության *«Գիրք թյուրքերի մյուս գինվորներից առավել լինելու մասին»* հատվածը թյուրքերի մասին, որը հիշատակվում է Հաջի Խալիֆի *«Քաշֆ ալ գունուն»* ստեղծագործության մեջ:

Ղազնևիների արքաներից Արդ ար-Ռաշիդի ժամակաշրջանում՝ մ.թ. 1050-1053թթ. գրվել է Գարդիզիի «Ջայն ալ Ահբարը», որի մեջ կան բազմաթիվ տեղեկություններ, ավանդազրույցներ թյուրքալեզու մի շարք ցեղերի մասին:

Գարդիզիի հսկայածավալ ստեղծագործության մեջ կան հատվածներ այլ հեղինակների երկերից, որոնցից թյուրքալեզու ցեղերի ուսումնասիրության համար հետաքրքիր է IX դ. պատմիչ Իբն Խորդադեբիի *«Քիթաբ ալ ախբարը»*՝ «Տեղեկությունների գիրքը», որում պատմվում են թյուրքալեզու ցեղերի ծագման մասին ավանդազրույցները:

Թյուրքալեզու ցեղերի մասին այս հեղինակների հիշատակությունները գրվել են թյուրքական երկրորդ խանության անկումից հետո: Իսլամի տարածմանը

գուզընթաց ձևավորվում են այլ ցեղային միավորումներ, իսկ նրանցից առավել հզորները կազմում են պետություններ՝ ինչպիսիք էին Ղազնևիների պետությունը Աֆղանստանի, Խորասանի, Բուխարայի տարածքում, ինչպես նաև Կարախանյան պետությունը Կենտրոնական Ասիայում:

Հետաքրքիր է այն, որ արաբապարսկական աղբյուրներում բազմաթիվ ցեղեր սկսում են կոչվել մեկ ընդհանուր *թյուրք* ցեղանվամբ: Հիշտ է, որոշ դեպքերում հիշատակվում են նաև այլ ցեղանուններ, այնուամենայնիվ, նրանք բոլորը ներկայացվում են իբրև *թյուրքեր*:

Իսլամական աշխարհի հզորությունը և արաբական մշակույթի ծաղկումն ու տարածվածությունը միջնադարում հիմք են տալիս ենթադրելու, որ *թյուրք* հասկացությունը ինքնաբերաբար սկսել է շրջանառվել արաբական աշխարհում և դրանից դուրս հասկացվելով որպես արդեն որոշակի լեզվակազմական և ժողովրդակազմական գործընթացներ անցած ցեղերի ամբողջություն:

**«Մահմուդ Կաշգարիի «Divân-ü Lüğati't-Türk»-ը՝ վերնագրով ենթազլխում ներկայացվում է թյուրքալեզու ժողովուրդների պատմության ուսումնասիրության ասպարեզում առաջին համապարփակ ստեղծագործությունը,** որոնցից հնարավոր է տեղեկություններ քաղել թյուրքալեզու ցեղերի ծագման և փոխառնչությունների մասին: Հատկանշական է, որ Կաշգարին թյուրքալեզու ցեղերին նույնպես ընդհանրացնում է *թյուրք* ցեղանվան ներքո, սակայն առանձին դեպքերում նշում է նրանց օղուզական ծագումը:

**«Վիսազրական աղբյուրներ. Ենիսեյաօրիստյան արձանագրություններ» վերնագրով ենթազլխում ներկայացվում են ռուսական գրերի ծագման մասին տեսակետները:**

**«Բանահյուսական աղբյուրներ» վերնագրով ենթազլխի «Ավանդագրույցներ օղուզների ծագման վերաբերյալ» ենթակետում ներկայացվում են թյուրքալեզու ժողովուրդների ծագման մասին ավանդագրույցներից շատերը, որոնք հավաքված են «Օղուզ Նամեում»: Նրա մի քանի տարբերակներ կան, որոնք գրի են առնվել տարբեր դարերում և որոշակիորեն տարբերվում են իրարից: Առաջին պահպանված տարբերակը «Օղուզ հաքան» անվանումով էպիկական ավանդագրույցների հավաքածուն է, որը գրված է ույրուրերենով և պահվում է Փարիզում: Այն թվագրվում է XIII-XIV դդ.: Թյուրքալեզու ժողովուրդների ավանդագրույցները համակողմանիորեն ներկայացրել են միջնադարյան երկու հեղինակներ՝ Ռաշիդ ադ Դինը «Ջամի աթ Թավարիխ» (XIVդ.) և Աբուլղազին՝ «Շաջարա-ի թարաքիմա», «Շաջարա-ի թյուրք» (XVIIդ.) ստեղծագործություններով:**

Այս ենթակետում արծարծվում են բազմաթիվ դրվագներ թյուրքալեզու ժողովուրդների ծագումնաբանությանն առնչվող ավանդագրույցներից փորձելով դրանցում տարանջատել նախաիսլամական շրջանից պահպանված բանահյուսական շերտը, իսկ այնուհետև քննարկվում է իսլամի ազդեցությունը այդ ավանդագրույցների վրա: Ավանդագրույցներում իսլամական շրջանում ի հայտ է գալիս նաև *Թյուրք* անունով նախահոր կերպարը, որը համարվում է Նոյի

ժառանգներից մեկը: Անդրադարձ է կատարվում նաև այս անվան վերհանման հարցին:

**«Թյուրքների (թյուրքերի) ծագումնաբանական ավանդագրույցները» վերնագրով ենթակետում տրվում են Էրզենեկոնի մասին ավանդագրույցների տարբերակները և փորձ է արվում ընդհանուր եզրեր փնտրել օղուզական, թյուրքական և մոնղոլական ավանդագրույցների միջև: Օղուզական և թյուրքական ավանդագրույցները համեմատելիս *թյուրք* ցեղանունը կրող ցեղերի ավանդություններում չկա օղուզական ցեղերի ծագման հետ կապված որևէ ընդհանրություն: «Օղուզ Նամեի» ույրուրական տարբերակում է միայն, որ հիշատակվում է գայլը որպես պաշտամունքային կենդանի: Մոնղոլական ցեղեր նիբունների և դուրլիգունների ավանդագրույցներում նույնպես կան Էրզենեկոնի ավանդագրույցի հետքեր: Մոնղոլական Նիբուն ցեղն, ըստ ավանդագրույցի, Մոխրագույն Գայլի Bozkurt (Kök Börü)-ի ժառանգն էր, իսկ Դյուրլիգինները Արսլանի Առյուծի: Գայլի (Börü) և առյուծի կերպարները (Bars=tonga) տարածված են եղել թյուրքալեզու ցեղերի շրջանում: Ավանդագրույցներում ընդհանուր գծերի առկայությունը խոսում է Ալթայական ժողովուրդների հոգևոր մշակույթի ընդհանրությունների մասին:**

**«Թյուրքալեզու ժողովուրդների վաղ պատմությունը» վերնագրով III գլխի «Հռնական ցեղային միությունը և Մատդուն շանյույը» վերնագրով ենթազլխում ներկայացվում է թյուրքալեզու ժողովուրդների վաղ շրջանի քաղաքական պատմությունը, որը սերտորեն առնչվում է նախ և առաջ հոնների հետ:**

**«Մատդունը և Օղուզ խանը» վերնագրով ենթազլխում ներկայացվում է թյուրքալեզու ժողովուրդների և հատկապես օղուզական ծագում ունեցող ցեղերի ծագումնաբանական խնդիրների արծարծման ընթացքում կարևոր նշանակություն ունեցող Մատդուն շանյույին, քանի որ նա ընկալվում է որպես նախահայր:**

Ի՞նչ հիմնավորումներով է ապացուցվում պատմական անձ Մատդունի և առասպելական կերպար Օղուզի նույնականացումը: Ի՞նչ հիմնավորումներով են Մատդուն շանյույից մի քանի դար հետո ձևավորված թյուրքալեզու օղուզական ցեղերը իրենց համարում նրա ժառանգները՝ այդպիսով թյուրքականացնելով նաև հոներին:

Մոնղոլիայի Նոյն Ուլա անվամբ հայտնի դամբարանադաշտերի տարածքում կատարված պեղումների ընթացքում գտնվել է մի արծաթյա գարդ, որի վրա պատկերված է *ցուլ*: Ջարդի վրա կան չինական հիերոգլիֆներ, որոնցով գրված է *Հույան* բառը: Կարծիք կա, որ այդ արծաթյա իրը պատկանել է հոնական *Հույան* տանը: Հեղինակը գտնում է, որ այն ունի չինարենից տարբերվող տառադարձում, որն ավելի շատ նմանվում է թյուրքա-մոնղոլական լեզուների բառապաշարին, հետևաբար այն ներկայացնում է հին թյուրքական դեռևս չառանձնացած մայր լեզվի *ցուլ* բառը:

Ա.Ն. Բերնշտամը, հիմք ընդունելով մի շարք գիտնականների վարկածներ, այս բառը վերլուծում է՝ նրանում տեսնելով տառադարձումներ *ն* և *ր* հնչյունների

միջև, հույան–հույար, հետագայում վերածումը խուղորի, ապա դուրի (*bugur-hugur-ugur*), դուզի, իսկ վերջում՝ օղուզի, որը, ըստ նրա, նշանակել է *ցուլ*։

անվամբ։  
Ելնելով *öküz-օղուզ-ցուլ* և *oğuz-օղուզ-նետեր* բառերի վերլուծությունից, Մատդունի էպիկական անվան առաջացման այս տարբերակին վերապահումով պետք է մոտենալ։

Այն ցեղերը, որոնք պահպանում էին իրենց բանահյուսության և պատմական հիշողության մեջ Մատդունի շանյույին՝ որպես երբեմնի հզոր առաջնորդի, և պարբերաբար կազմում էին միություններ՝ *օղուզ-նետեր* անունով, իրենց նախնուն տալիս են հավաքական անուն՝ *Օղուզ*, որը կապ չունի *öküz-ցուլ* բառի հետ։

Հաջորդ հիմնավորումը երակացվում է Մատդունի և Օղուզի իշխանության մասին պատմական հիշատակություններից և ավանդազրույցներից։

Միմա Ցյանի նկարագրած պատմական իրադարձությանը նման գործողությունների հանդիպում ենք Օղուզ խանի մասին ավանդազրույցներում։ Օրինակ, Մատդունը և Օղուզը սպանում են իրենց հայրերին՝ և իրենց շուրջը համախմբում մի շարք ցեղերի։ Մատդունի հայրը Թատմանն էր, իսկ Օղուզինը՝ Քարա խանը։

Մյուս հիմնավորումը, որը նույնպես լայնորեն օգտագործվում է պատմագիտական և բանասիրական հետազոտությունների համար, Մատդունի շանյույի կողմից իր ենթակայության ներքո գտնվող գործերի բաժանումն է թերի։ Միմա Ցյանը հաղորդում է, որ սյուննուններն ունեին քսանչորս առաջնորդ, որոնց կոչում էին *վան ցի*։ Չինական աղբյուրների համաձայն, դրանք բաժանվել են երկու մասի՝ *արևնտյան (չժուկի)* և *արևեյան (յուլի)*։ Ըստ Հ.Ն. Օրբունի՝ օղուզական ցեղերը նույնպես բաժանվում էին երկու թևերի՝ *boz oq/«մոխրագույն նետ»* և *üç oq/«երեք նետ»*։ Ցեղերի քանակը տարբեր աղբյուրներում տարբեր է՝ նրանք բաժանվում էին 22 կամ 24 ցեղերի։

Միանշանակ պնդել, որ Մատդուն շանյույը թյուրքալեզու է եղել իր առաջնորդած ցեղերի հետ միասին, անհիմն է, քանի որ նրանց զբաղեցրած տարածքը Հունական ցեղային միության կազմավորման շրջանում համընկնում է այն տարածքի և ժամանակահատվածի հետ, ուր ընթանում էին մոնղոլերենի, թունգուզամանչուրական և թյուրքական լեզուների ձևավորման գործընթացները։ Ուստի, նույն հաջողությամբ Մատդունին կարող են իրենց նախնի համարել նաև այդ ժողովուրդները։

**«Թյուրքուններն ու թյուրքական հաքանությունները» վերնագրով ենթազլխում** ներկայացվում է թյուրքական երկու հաքանությունների գոյության ժամանակաշրջանը, որը կարելի է համարել Կենտրոնական Ասիայում թյուրքական լեզուների տարածման և թյուրքալեզու էթնիկ խմբերի ժողովրդակազմական գործընթացներում կարևորագույն և որոշիչ ժամանակավորը։ Այսպես կոչված *Թյուրքական աշխարհն* առաջին անգամ միավորվում է մեկ լեզվական ընդհանրության մեջ՝ շնորհիվ այս ժամանակաշրջանի արձանագրությունների և ի հայտ են գալիս ցեղանուններ՝

*թյուրք* և *օղուզ*, որոնք փաստացի երևում են դրանցում։ Նրանց առկայությունն օգնում է պարզել թյուրքալեզու ժողովուրդների նախնիների միմյանց հետ հարաբերակցության աստիճանը։ *Թյուրք* ցեղանունը չինական տարեգրությունների մեջ առաջին անգամ հայտնվում է մ.թ. VI դարում։ Այն եզակի թվում ունեցել է *թյուրքուն* կամ *թյուրքուն* արտասանությունը։ *Թյուրքուն* ցեղանվան հոգնակին կազմվել է մոնղոլերենի հոգնակիակերտ վերջավորությամբ և ստացել *թյուրքունք* ձևը, որից հետագայում սղվել են *յ* և *ու* հնչյունները, մնացել է միայն *թյուրքը*։ Այս առնչությամբ անդրադարձ է կատարվում *ցյորթյուրքեր* ցեղանվան մեկ այլ մեկնաբանության ևս, որն այդ ցեղերին կապում է առասպելական Գոգ և Մագոգի և Հայկական Գուգարք նահանգի հետ։ Այս տեսակետները առաջ են քաշվում աղբրեջանցի պատմաբաններ Շ.Բ. Սեֆերոլուի և Ա.Մյուդերիշօլուի կողմից։ Նրանք հղում են թյուրքի պատմաբան Ջ.Վ. Թողանին՝ նշելով, որ *պատմական Աղվանքի հարևան գոգ-գարգարացիների* ցեղանունն առաջացել է թյուրքերեն *Gök-ցյոր* բառից, ինչպես նաև այս բառի հետ է կապվում Օղուզ խանի որդի *Գյոքի* անվան առաջացումը։

Պատմական Գուգարք նահանգը հիշատակվում է Ստրաբոնի «Աշխարհագրության» մեջ, ինչպես նաև միջնադարյան հայ պատմիչներ Մ.Խորենացու, Ագաթանգեղոսի երկերում՝ որպես հայկական տեղանուն, իսկ ընդհանրապես գարգարացիները նույնացվում են մի շարք ժողովուրդների հետ՝ օրինակ, ինգուշների, Դադատանի ժողովուրդների հետ և այլն։ Նշենք, որ *Գոգի* և *Մագոգի* պատմությունը կապ չունի գարգարացիների հետ։ Թյուրքերեն *ցյոր* և փոքրասիական *ցոգ* բառերը ամենևին միմյանց հետ չեն առնչվում լեզվաբանական տեսանկյունից, իսկ *Գուգարք* տեղանվան համարումը թյուրքերի բնակության վայրի հետ նույնպես անհիմն է։ Այդ տեսակետը թյուրքաղբրեջանական պատմագրության համար քաղաքական դաշտում հենքեր ստեղծելու միտում ունի այնպես, ինչպես Աղվանք-Ալբանիայի խնդիրն է։ Ինչ վերաբերում է Գոգ և Մագոգ (արաբ. Hajsj-majaj) անուններին, ապա դրանք պետրատիվ ցեղանուններ են, այսինքն իրական ցեղեր չեն ներկայացնում և տարածված են քրիստոնեական ու իսլամական ավանդություններում։ Նրանք նույնպես չեն կապվում *Գյոք-երկնագույն* թյուրքերեն բառի և *ցյորթյուրքերի* հետ։

Ենիսեյաթրիստյան արձանագրություններում հաճախ հանդիպում են *bodun, bodunim, budunima türkima* արտահայտությունները, որոնք այդ արձանագրությունների թվագրման ժամանակաշրջանում՝ VIII դ., թարգմանվում են *ժողովուրդ, իմ ժողովուրդ, իմ ժողովրդին* իմաստներով։ Ինչպես ս էր ընկալվում *bodun-բոդուն՝ ժողովուրդ* հասկացությունը՝ Թյուրքական խանությունում, և որքանով էր այն արմատացած նրանց մեջ՝ իբրև ինքնագիտակցություն։ Այս բառի իմաստը ամենևին էլ պետք չէ հասկանալ *ժողովուրդ* բառի՝ *էթնոս* բացատրությամբ այն պարզ պատճառով, որ թյուրք էթնոսիմը կրող ցեղերը՝ որպես ժողովուրդ, VIII դ. դեռևս ձևավորված չէին։ *Բոդուն* բառը հաճախ հանդիպում է խաների կամ մեծ գորավարների խոսքում՝ իրենց հպատակության

տակ գտնվող ցեղերին միավորելու, խանի իշխանությանը ենթարկելու, իրենց ենթարկվող ցեղերին ոգեշնչելու համար:

*Qara budun* բառակապակցությունը թարգմանվում է *սև ամբոխ* իմաստով, *մարդկանց բազմություն*: Այսինքն այս դեպքում հասկացվում է հասարակ, աղքատ մարդկանց մի խումբ: Հետևաբար, էական չէ, թե նրանք որ ցեղին էին պատկանում: Այսինքն *ժողովուրդ* բառը եղել է հավաքականության արտահայտման միջոց, երբ այն օգտագործվել է խանի խոսքում: Մյուս կողմից, հանդիպում է նաև *bağlar bodun-բաղլար բողուն բեկերի խումբ*, արտահայտությունը, ուր խոսվում է տվյալ ցեղի առաջնորդների խմբի մասին:

Ուշագրավ է, որ ենիսեյաօրիստնյան արձանագրություններում պատմվում է այն մասին, թե ինչպես է թյուրքական խանը պատերազմում գանազան այլ ցեղերի դեմ, ինչպիսիք, օրինակ, չիկերն էին, կարուկները, ուշ օղուզները, օղուզները (տեղեկությունները վերցված են տարբեր հուշարձաններից, ուստի *թյուրքական խան* հասկացությունը վերաբերում է Մոզիսյան կամ Բիլգե խանին, Իլտերիշ հաքանին):

Այսպես.

«çik bodun qirgiz birlä jagi bolti» - Չիկերի ժողովուրդը դրողզաների հետ դարձավ մեր թշնամին”:

«İteris qağan...oğuzqa bés süñüšdi» – “Իլթերիշ հաքանը հինգ անգամ գնաց օղուզների դեմ”:

«Бир жашыма карлык будун...äпикли жагы болты...» - Իմ կյանքի առաջին տարում կարուկները դարձան մեզ թշնամիներ”:

Ենիսեյաօրիստնյան արձանագրություններում *qarluq bodun-կարլուկ բողուն (կարլուկ ժողովուրդ)*, *qirgiz bodun- դրրողզ բողուն (դրրողզ ժողովուրդ)*, օղուզ արտահայտությունները ցույց են տալիս, որ թյուրքները այսինքն այն ցեղերը, որոնք իշխում էին հաքանությունում, իրենց հակադրում էին այլ ցեղային միավորումների, որոնք միացել էին իրար որպես դաշնակիցներ՝ ընդդեմ թյուրքական հաքանության: *Բարլուք, քրրքրզ* և այլ ցեղանունների հիշատակումը ցույց է տալիս, որ թեև կային թյուրքալեզու ցեղեր, սակայն նրանք թյուրքների հետ էթնիկական ընդհանրություն չէին կազմում: Թյուրքերի վարած պատերազմների և այլ ցեղերի վրա հարձակումների մասին տեղեկություններում այդ ցեղերը հանդես էին գալիս իրենց իրական, առաջնային ցեղանուններով: Այդ ցեղերին նույնպես անվանում էին *բողուն՝ ժողովուրդ*: Սակայն այդ դեպքում հասկացվում էր ժողովուրդ բառի էթնոս իմաստը, այսինքն՝ վերջիններս ընկալվում էին իբրև ծագումնաբանական կապերով միավորված ցեղեր:

Ենիսեյաօրիստնյան արձանագրություններում օղուզական ցեղերի ծագման մասին տեղեկություններ չկան: Միայն նշվում է, որ նրանք հանդես էին գալիս Թյուրքական խանության կազմում կամ նրա կազմից դուրս՝ որպես խանության հետ պատերազմի մեջ գտնվող ցեղախումբ կամ ցեղախմբեր, և ըստ ամենայնի, *նետերը-օջուզ* խորհրդանշել են այդ ցեղերի ծագմական միությունները: Որպես օրինակներ պետք է նշել սօ օջուզ-ուշ օղուզներին (երեք օղուզներ)-*կարլուկներ* և *dokuz oğuz-դոքուզ կամ օո-օո օջուզ-օն օղուզներին* (ինը կամ տասը օղուզներ)-

*ուլղուրներ*: Օղուզ ցեղանվանը կցված այս թվերը ցույց էին տալիս, թե քանի թևից էր կազմված տվյալ ցեղախումբը:

VIII դ. կեսերին *դոքուզ օղուզ* և *օն օղուզ* ցեղանուններով հայտնի ուլղուրները պարտության մատնեցին Թյուրքական հաքանությանը և ստեղծեցին Ուլղուրական խանությունը:

Այսինքն կարելի է եզրակացնել, որ Թյուրքական հաքանությունների գոյության ժամանակաշրջանում ընդհանրապես չէր վկայակոչվում թյուրքալեզու ցեղերի լեզվական ընդհանրությունը որպես միավորիչ հանգամանք: Այսպես կոչված *թյուրքական աշխարհը*, որը հետագայում ներկայացվում է Մ.Կաշգարիի ստեղծագործության և արաբապարսկական պատմագրության էջերում, մտացածին էր իր ստեղծման և գոյության ժամանակաշրջանում:

**Եզրակացությունում** ամփոփվում են ատենախոսության հիմնական արդյունքները.

- Թյուրքալեզու ցեղերի ծագման այն վարկածներն ու տեսությունները, որոնք փորձում են թյուրքալեզու ցեղերի նախնիներին փնտրել Առաջավոր Ասիայի հնագույն քաղաքակրթությունների շրջանակներում՝ շումերների, խուրրիների, ինչպես նաև Կենտրոնական Ասիայի իրանալեզու թուրքերի, սակ-սկյութների կողքին, և հիմնավորված չեն, այլ հենվում են պատմական աղբյուրների կամայական, հակագիտական մեկնաբանությունների վրա: Այդ տեսությունների ստեղծումը պայմանավորված էր XIX-XX դդ. ռասիստական, շովինիստական գաղափարախոսությունների վերելքով, որը համակել էր Եվրոպան և իր ազդեցությունն էր թողել նաև թյուրքալեզու ժողովուրդների ազգայնամոլական գաղափարախոսությունների ձևավորման գործընթացի վրա: Նմանօրինակ պատմագիտական և լեզվաբանական ուսումնասիրությունները ինքնանպատակ չեն: Դրանց միջոցով փորձ է արվում խեղաթյուրել այժմյան Թուրքիայի Հանրապետության տարածքի բնիկ բնակչության պատմությունը՝ դրանով իսկ նպաստելով նրանց՝ մի քանի դար շարունակվող բնաջնջման քաղաքականությանը:
- Ալթայական լեզուների ձևավորման վերաբերյալ հետազոտությունները վկայում են թյուրքական և մոնղոլական լեզուների սերտ առնչությունների մասին: Ալթայական լեզվաընտանիքի ներսում թյուրքական լեզուներն առանձնապես սերտ ընդհանրություններ ունեն հին մոնղոլերենի հետ բառակազմության և բառապաշարի ոլորտում: Սերտ առնչությունները հիմնավորվում են նաև կենսակերպում և հավատալիքներում այդ ցեղերի ունեցած մշակութային առանձնահատկություններով: Դա հիմք է տալիս հիմնավորելու այն տեսությունը, որ այդ ցեղախմբերի կազմավորումը հնագույն ժամանակներում ընթացել է միևնույն տարածքում և մշակութային միջավայրում, ուստի թյուրքալեզու ցեղերին ամենամոտ նախնիներ պետք է

համարել մոնոլոների նախնիներին, և որ ամենահավանական տեսակետն է նրանք պետք է դասվեն հոների ցեղային միավորումների շարքին, որում գերակշռել է մոնոլոլական տարրը:

- Չինական տարեգրությունները առաջին օտար գրավոր աղբյուրներն են, որոնք անուղղակիորեն վկայում են Հոնական ցեղային միության կազմում թյուրքալեզու ցեղերի առկայության մասին: Չինական աղբյուրների հետազոտությունը ցույց է տալիս, որ թյուրքալեզու ցեղերի նախնիները եղել են Չինաստանի հարևան հոնական ցեղերի շարքում: Սակայն հոները ներառել են նաև այլ ծագում ունեցող ցեղերի, ուստի դժվար է նրանց մեջ տարբերակել թյուրքալեզու ցեղերի նախնիներին:
- Պատմագրության մեջ թյուրքալեզու ցեղերի հատկապես օղուզական ցեղերի նախնիների միության հավանական գոյության մասին հիշատակվում է մ.թ.ա. III դ. Հոնական ցեղային միության ու նրանց հայտնի առաջնորդ Մաոդունի մասին պատմություններում: Ինչպես նաև զուգահեռներ են տարվում Հոնական ցեղային միության և օղուզական քսանչորս ցեղերի թևերի բաժանման միջև:
- Պատմագիտության մեջ և բանահյուսական ուսումնասիրություններում զուգահեռներ են տարվում *Մաոդուն շանյույ* պատմական և *Օղուզ խան* առասպելական կերպարների միջև: Թյուրքալեզու ժողովուրդների շրջանում արմատացած է այն համոզմունքը, որ Հոնական ցեղային միության առաջնորդ Մաոդուն շանյույը առասպելական Օղուզ խանն է: Սակայն ինչպես ցույց է տալիս *օղուզ* ցեղանվան լեզվաբանական վերլուծությունը՝ Օղուզը պետրատիվ անուն է: Այսինքն, այն առաջացել է օղուզական ցեղերի ինքնանվանումից և պատմական նախահոր իրական անվան և կերպարի հետ առնչություն չունի: Չինական աղբյուրներում մ.թ.ա. III դ. չեն հիշատակվում *ն չ օղուզ*, *ն չ թյուրք*, և *ն չ* էլ նրանց ցեղերին պատկանող այլ ցեղանուններ, ինչը թույլ է տալիս հիմնավոր վերլուծություններ կատարելու նրանց լեզվական կամ էթնիկական առանձնահատկությունների մասին: Հոնական ժամանակաշրջանում թյուրքալեզու ցեղերի նախնիները չեն առանձնանում էթնիկական և մշակութային առանձնահատկություններով: Վերջիններս հանդես են գալիս հոների բարբարոս ցեղերի կազմում և սեփական գրի բացակայության ու ռասայական հատկանիշների ընդհանուր մոնոլոլիդ տիպի առկայության պայմաններում, տևական ժամանակաշրջանի ընթացքում չեն տարանջատվում այդ խմբերից: Նույն կերպ նրանք ընկալվում են նաև այլ ժողովուրդների կողմից: Հոն ցեղանունը նույնքան ընդհանրական է թյուրքալեզու ցեղերի համար, ինչպես օրինակ *թաթար* ցեղանունը միջնադարում, որը նույնպես չի արտացոլում թյուրքալեզու այդ ժողովուրդների իրական էթնիկական ինքնաընկալումը:
- Հունահռոմեական և հայկական աղբյուրների հիման վրա կատարված դիտարկումները ցույց են տալիս, որ մինչև մ.թ. VI դդ. *թյուրք* ցեղանունը չի հանդիպում: Միջնադարյան չինական և բյուզանդական աղբյուրներում *թյուրք* ցեղանունը հայտնվում է ժամանակային փոքր տարբերությամբ՝ VI-

VII դդ.: Ե՛վ չինական, և՛ հունահռոմեական պատմագրությանը մինչ այդ անձանոթ էր *թյուրք* հասկացությունը, իսկ այուննունների և հոների հետ նրանց առնչության մասին տեղեկությունները բավական սակավ են և ավելի շատ հիմնվում են պատմական իրողությունների ու սակավաթիվ լեզվական ընդհանրություններից բխող եզրահանգումների վրա: Հայ պատմագրության մեջ Թովմա Արծրունին և Արիստակես Լաստիվերցին այն հեղինակներից են, ովքեր օգտագործում են *Թուրքաստան* հասկացությունը, որով, թերևս, կարելի է ենթադրել, որ լեզվական և ռասայական ընդհանուր հատկանիշներով միավորված թյուրքալեզու ցեղերն ընկալվում էին իբրև մեկ ամբողջական էթնոլեզվական ընդհանրություն:

- Իսլամի տարածմամբ ստեղծվում է մշակութային և տարբեր ոլորտների կառավարման մի ընդհանուր հարթակ, որում միավորվում են տարբեր ժողովրդակազմական գործընթացներ անցած էթնոսներն ու ցեղախմբերը: *Թյուրք* տերմինը ինքնաբերաբար սկսում է շրջանառվել արաբապարսկական միջավայրում և դրանից դուրս՝ հասկացվելով որպես արդեն որոշակի լեզվակազմական և ժողովրդակազմական գործընթացներ անցած ցեղերի ամբողջություն:
- Ենիսեյաօրիստյան արձանագրություններում փաստացի հիշատակվում է իշխող դիրք գրավող ցեղախմբի՝ *թյուրքերի* մասին: *Թյուրքերն* իրականում ձուլվում են այլ ցեղախմբերի և անհետանում պատմության ասպարեզից, սակայն նրանց ցեղանունը սկսում է ընդհանրական անվանում դառնալ այլ թյուրքալեզու ցեղերի համար: Արձանագրություններում հիշատակվում են այլ թյուրքալեզու ցեղեր, որոնք միավորվել են՝ ստեղծելով ինքնուրույն ցեղային միավորումներ, որոնք ունեն առանձին ցեղանուններ և տարանջատվում են իրենց թյուրքերի ցեղերից: Այդ միավորումների անվանումները խորհրդանշականորեն արտահայտել են Թյուրքական իլի ներսում կամ նրանից դուրս՝ որպես նրա հետ պայքարող կողմ լինելու գաղափարը: Այդ հանգամանքը պարզորոշ արտահայտվում է նրանց ցեղերի ինքնանվանումներում՝ *ուչ օղուզ*- «երեք նետ», *դոքուզ օղուզ*- «ինը նետ», և այլն: Ահա այստեղ է, որ հանդիպում ենք *օղուզ* ցեղանվանը, որը ռազմական միավորման նշանակություն ունի և կրկին պարզ չէ, թե արդյոք այդ անուններով հանդես եկած ցեղերը, բացի լեզվական ընդհանրությունից, այլ ընդհանրություններ էլ ունեցել են, թե ոչ: Ինչպես վկայում են ենիսեյաօրիստյան արձանագրությունները և այդ ժամանակաշրջանի օտար աղբյուրները, օղուզական ցեղային միավորումներով հանդես եկող ցեղերն ունեցել են նաև իրենց առանձին ինքնանվանումները, իսկ նետերի սկզբունքով միավորումը խորհրդանշական բնույթ է ունեցել: Նետերի միավորման այս ավանդույթը արտացոլվում է նաև բանահյուսության մեջ, որն առկա է ինչպես թյուրքալեզու ցեղերի, այնպես էլ մոնոլոլների ավանդազրույցներում: Թյուրքալեզու ցեղերի միավորման այս ձևը արտացոլվում է ենիսեյաօրիստյան արձանագրություններում և բնորոշում է ցեղերի ռազմական միավորումը: Սակայն այն հիմք է դառնում այդ ցեղերի

միջև նաև ազգակցական կապերի հաստատման, իսկ այնուհետև էթնիկական ինքնաընկալման ձևավորման համար: Այն, որ օղուզական ցեղերն ու թյուրքերը իրար հակադարձվել են, երևում է ոչ միայն արձանագրություններից, կա լեզուների տարբեր ճյուղերի պատկանելության խնդիրը: Օրիսնյան արձանագրությունների լեզուն, որում առանձնանում են հին օղուզական և ույղուրական լեզուները, պատկանում են արևելախոսնական թյուրքական լեզուների ույղուրական ճյուղին: Թյուրքերի լեզուն հետագայի ույղուրական ճյուղի լեզուների շարքում բացակայում է այն տարրալուծվում է ներկայիս տուվայական լեզուների մեջ: Իսկ օղուզական լեզուները հետագայում զարգացել են որպես արևմտախոսնական ճյուղի լեզուներ, որոնք այսօր ներկայանում են ժամանակակից թյուրքներենով, գագաուզերենով, ադրբեջաներենով և թյուրքերենով: Այսինքն՝ լեզվական տեսանկյունից օղուզական ցեղերն ու թյուրքերը իրարից բավական հեռու են, ուստի օղուզական ցեղերի և թյուրքերի էթնիկական միասնությունը լեզվական տեսանկյունից ժխտվում է: Օղուզական ցեղերի բարբառներում, ապա լեզուներում իրական թյուրքերի լեզուն հիմք չի հանդիսանում՝ կրկին հեռացնելով *թյուրք* էթնիկական միասնության գաղափարից:

- Օղուզների և թյուրքերի ավանդազրույցները, որոնք ներկայացնում են նրանց ծննդաբանությունը, նույնպես վկայում են նրանց տարբեր ծագում ունենալու մասին: Այս խմբի մեջ մտնող ցեղերն իրենց թողած ավանդազրույցների մեջ իրենց նույնացնում են *օղուզների* հետ ողջ միջնադարի ընթացքում, նրանց մոտ *թյուրք* էթնիկական ինքնաընկալումը կամ լիովին բացակայում է, կամ էրկրորդական նշանակություն ունի: Առկա են ընդհանուր եզրեր օղուզական, թյուրքական ու մոնղոլական ավանդազրույցներում, ինչը վկայում է այդ ցեղերի այլթայական համակարգից սերվելու մասին: Հատկանշական է, որ օղուզների և թյուրքերի ավանդազրույցներում պարզորոշ երևում է իրարից բոլորովին տարբեր ծագման շերտերը, տարբեր նախնիների առկայության փաստը: Սա խոսում է այն մասին, որ լեզվական հատկանիշներով միմյանց հետ սերտ առնչություն ունեցած ցեղախմբերի բուն էթնիկական ինքնագիտակցության մեջ *օղուզ ու թյուրք* ցեղանունները իրարից բավական հեռու են: Օղուզական ցեղերից ձևավորված ժողովուրդների շրջանում Օղուզ առասպելական կերպարի ծառանգներ լինելու, հետևաբար օղուզական ցեղեր լինելու գիտակցությունը ավելի բարձր է, քան *թյուրք* լինելու գաղափարը, թյուրքների իլի և թյուրք բողոնին պատկանելությունը: Օղուզական ցեղերի էթնիկական ինքնաընկալումից *թյուրք* լինելու գաղափարը հեռացնող կարևորագույն երևույթը այն իրականությունն է, որում ապրել են այդ ցեղերը ողջ միջնադարի ընթացքում: Դա էթնիկական տարանջատման երկրորդական գաղափար լինելու հանգամանքն էր: Սա պայմանավորված է նրանով, որ հատկապես իսլամական աշխարհում կարևորվել է հասարակության կրոնական պատկանելությունը, այլ ոչ թե

ազգայինը: *Ազգ և ժողովուրդ* հասկացությունները ներմուծվել են իսլամական հասարակության մեջ՝ նոր ժամանակներից սկսած:

- Նոր ժամանակներում գիտության առաջընթացը և եվրոպական տերությունների նվաճողական քաղաքականությունը արևելքում հանգեցրին մի շարք հանգամանքների առաջացմանը, որոնք հեղաշրջիչ նշանակություն ունեցան հիմնականում իսլամական սկզբունքներով ապրող թյուրքալեզու ժողովուրդների կյանքում: Ազգային գաղափարախոսությունների ստեղծման ավիքի ազդեցությամբ թյուրքալեզու ժողովուրդների շրջանում սեփական պատմությունը վաղ ժամանակներից սկսած վերանայելու և ընդհանուր հայրենիքի գաղափարը ձևավորելու և զարգացնելու անհրաժեշտություն առաջացավ: *Թյուրք* ընդհանրական հասկացությունն, այսպիսով, ծնունդ առավ և վերաարժևորվեց այս պայմաններում, և, բնականաբար, որքան ընդգրկուն լինե՞ր այն և մեծանար աշխարհագրորեն, այն ավելի ոգևորիչ խթան էր, և որպես այդպիսին մինչ օրս էլ մնում է թյուրքալեզու ժողովուրդների համար:

Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից  
հրատարակված հետևյալ գիտական աշխատություններում

1. Թյուրք էթնոնիմը, *Orientalia*. հոդվածների ժող.: Պրակ 7-8, Եր.: «Իրանագիտական կովկասյան կենտրոն» հրատարակչություն, 2008, էջ 154-160:
2. Մոթոն շանյույը օրուգական ցեղերի նախահայր, Մերձավոր Արևելք, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, Արևելագիտության ինստիտուտ, հոդվածների ժողովածու, VII, Երևան, 2011, էջ 59-64:
3. Թյուրքերն ու օղուզները Մոզիլյան խանի արձանագրություններում, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, Արևելագիտության ինստիտուտ, VII, Երևան, 2011, էջ 93-102:
4. Թյուրքալեզու ցեղերի վաղ պատմության ուսումնասիրության աղբյուրները, Լրաբեր հասարակական գիտությունների, 2(638), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2013, էջ 150-155:

АЙВАЗЯН ШУШАНИК САРКИСОВНА

РАННИЙ ЭТАП ИСТОРИИ ТЮРКОЯЗЫЧНЫХ ПЛЕМЕН  
(ФОРМИРОВАНИЕ ЭТНОНИМОВ ТЮРК И ОГУЗ)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02-«Всемирная история».  
Защита состоится 22 декабря 15:00, на заседании специализированного совета 006 - «Всемирная история», действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. М. Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и первоисточников.

Во введении обоснована актуальность темы, определены цель и задачи, представлена научная новизна, дан обзор литературы и первоисточников.

Изучение вопроса происхождения тюркоязычных народов является довольно проблематичной, так как многие вопросы касательно этногенеза большинства тюркоязычных народов до сих пор не имеет окончательного ответа.

Вопрос происхождения тюркоязычных народов, к сожалению, не является только проблемой науки: в разных теориях часто выявляются политические подоплеки и цели, которые в разные времена становятся идеологиями и политическими направлениями. Поэтому общее обозрение и дискуссия разных теорий по этногенезу тюркоязычных народов является актуальной по сей день.

В первой главе «Предыстория тюркоязычных народов» даны общие сведения об антропологической, этнологической характеристике Центральной Азии с древних времен до наших дней.

В этой главе представлены наиболее известные теории о происхождении тюркоязычных народов. Одна из этих теорий связана с племенами индоевропейского происхождения, известными под именем тура.

Происхождение и развитие этой теории связано с появлением в конце 19-ого и в начале 20-ых вв. шовинистических и расистских идеологий в Европе. Османская империя проживала свои последние годы, она нуждалась в новых идеях правления, которым впоследствии стала теория пантюркизма. Другие теории, которые были выдвинуты позже в республиканской Турции, связывали происхождение тюркоязычных народов со скифами, гуннами, иные же искали прародителей этих народов среди древних культур Передней Азии и Месопотамии.

Главная цель диссертации - изучение процесса развития самосознания этнической общности у тюркоязычных народов на ранних стадиях их истории. В первой главе представлены теории появления и развития тюркских языков, дана



общая характеристика антропологических данных современных тюркоязычных народов. Также рассказывается о распространенных в древние времена в Центральной Азии верованиях монгольских и тюркоязычных племен, известных под именем тенгрианство.

Во второй главе "Тюркоязычные народы в историографических, эпиграфических и фольклорных источниках" представлены упоминания о тюркоязычных народах в древнекитайских, греко-римских, армянских, арабо-персидских первоисточниках.

В этой связи китайские источники являются самыми древними и наиболее верными источниками, которые хранят сведения о прародителях тюркоязычных народов. Труды известного китайского историографа Сыма Цяня дают прекрасную возможность для изучения истории и обычаев народов и племен, которые проживали рядом с Китаем. В этой главе представлены упоминания Сыма Цяня о кочевом племенном союзе, который в литературе известен как "Гуннская империя" и о его величайшем предводителе Шанюя Маодуна.

Во второй главе предстали упоминания о тюркоязычных народах в средневековых греко-римских, армянских, арабо-персидских источниках. Изучение этих источников показывает, что этноним тюрк появляется в них почти одновременно, в VI-VII вв. Этот этноним, изначально принадлежавший одному конкретному племенному союзу, благодаря арабо-персидской литературе, в средние века распространилось на многие тюркоязычные племена, как общий экзоэтноним этих племен, имевших одинаковый антропологический тип и общую языковую типологию.

Фольклор тюркоязычных народов тоже является ценным источником изучения начальной стадии истории тюркоязычных народов. Множество сведений о разных тюркоязычных племенах содержится в эпосе "Огуз Наме", который имеет несколько вариантов и является достоянием многих народов. Легенды тюркоязычных народов собраны благодаря двум известным авторам средневековья – Рашиду ад Дину (Сборник летописей) и Абу'л Гази Хивинскому (Родословная туркмен и Родословная тюрков). В данной диссертации изучены те фрагменты вариантов "Огуз Наме", которые содержат информации о происхождении этих народов. Также представлены известная легенда "Эргенекон" в разных вариантах и несколько монгольских легенд, в которых возможно найти общие черты и выявить различия.

В третьей главе "Ранняя история тюркоязычных народов" представлена политическая история племенного союза гуннов и история создания тюркских каганатов в V-VIII вв. В этой главе обсуждается проблема этнического самосознания тюркоязычных племен, имевших отношения с племенами тюрков Тюркского каганата.

В заключении представлены основные выводы по рассмотренным проблемам.

SHUSHANIK S. AYVAZIAN

THE EARLY HISTORY OF TURKIC SPEAKING TRIBES  
(THE FORMATION OF THE ETHNONYMS TÜRK AND OGHUZ)

The defense of the dissertation will take place at 15:00, on 22 of December of 2014, at the meeting of the Specialized Council 006 "World history" at the Institute of Oriental Studies of the NAS RA.

Address: Yerevan, 0019, M. Baghramyan ave., 24/4.

The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the doctor of philosophy in the field of "World history" 07.00.02

SUMMARY

The present dissertation consists of an introduction, three chapters, conclusion, a list of references and sources.

The relevance of the topic, the purpose and objectives of the study as well as scientific innovations are substantiated and introduced in the introduction.

The purpose of the dissertation is to introduce the problems related to the most widespread theories of the origin of Turkic speaking tribes. The main goal is the concentration on their early history of two greatest tribal associations of Türks and Oghuz. These two ethnonyms have largely been used during the identification of the Turkic speaking tribes in medieval Arabic, Armenian, Greco-Roman sources and Orchon inscriptions.

There is an opportunity to determine the level of their common ethnic consciousness at the early stages of these tribes' history.

The first chapter entitled as "The prehistory of Turkic speaking peoples" represents the anthropological and ethnolinguistic description of Central Asia from the second millennium B.C. up to present. The territory of Central Asia has always been an active area of expansion of many peoples. The first inscriptions and anthropological research of Central Asia show the first fixed presence of the tribes of proto Indo-European linguistic family.

The early theories about the origin of Turkic speaking peoples have highly been effected by the theories of Arian racism spread in the European countries in the 19<sup>th</sup> and early 20<sup>th</sup> centuries. Many Ottoman and Turkish scholars in the 19<sup>th</sup> and early 20<sup>th</sup> centuries tried to connect the origin of the Turkic speaking peoples to the Aryan theories identifying them with the indo-European tribes of Tura of Turan. Several of which have also been connected to the origin of an ancient civilization of Sumerians of southern Mesopotamia. The followers of other theory are looking for the ancestors of Turkic speaking peoples in the tribes of Scythians and Sakas.

The first chapter also provides information on the anthropological description of the Turkic speaking peoples, the main theories of the origin of Turkic languages and the most popular in Central Asian steppes system of beliefs-tengriism.

The second chapter entitled "The Turkic speaking peoples in historiographic, lithographic and folkloric sources" represents the direct and indirect citations about the above mentioned tribes in Chinese, Greco-roman, Arabic and medieval Armenian sources. The research of Chinese sources provides with the information about the tribes of Huns, which were the closest neighbours of ancient China.

Many Turkic speaking peoples consider that their ancestor has been the great shanyu Maodun, the leader of the huns in the third century B.C. The author tried to compare the historical characters of Maodun shanyu and the legendary ancestor of the Oghuz tribes Khan Oghuz.

The discussion of the appearance of the ethnonym Turk in medieval sources proves its appearance during VI and VII centuries A.D. in Chinese, Greco-Roman and Armenian historiographic sources.

The study of the legends, among which are different variants of "Oghuz name" shows the greatest influence of Islam on them. Otherwise there are pre-islamic character and worldview of the most of Turkic speaking peoples.

In this chapter is given the linguistic analyzes of the origin of ethnonyms Oghuz and the name of legendary ancestor Oghuz Khan. The other stock of legends provides with legendary stories about Ergenekon, where the main ancestors of the Turks are considered to be the wolf and a boy.

The study of these two stocks of legends shows a great difference between the origin of the Turks and Oghuz. Evidently there is a common lineage among the Oghuz, Turkic and Mongolian legends, but they are absolutely different from each other and introduce a very different worldview, beliefs and ethnic consciousness.

The third chapter entitled "The early history of Turkic speaking peoples" represents the political history of the ancestors of Oghuz tribes and Turks.

As the most believed ancestors of the Oghuz tribes are considered to be the Huns, their history is the most valuable theme of research.

In this chapter are represented the periods of rise and fall of Hunnic Empire, its big role played in the formation of many medieval peoples of Central Asia and Eastern Europe.

In the above mentioned chapter are represented the details of the history of Huns from their rise in Central Asia, and then spread to Eastern Europe. One of the interesting moments in their history is crossed with Oghuz Khan and Maodun shanyu, the other one is the historical character of Attila the Hun, who is also considered to be the ancestor of Turkic speaking peoples.

The main results of the dissertation are summarized in the conclusion.

The tribes of Oghuz and Turks have separate history, they had a different ethnic consciousness in their early stages, despite the general case for unifying - the language.